Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

1-2(503-504)
30.01.2018
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱՐՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Հունվարի 25-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստը, որը վարում էր ԱրՊՀ խորհրդի նախագահ, Աժ խոսնակ Աշոտ Ղուլյանը: Ռեկտոր Մանուշ Մինասյանը հաշվետվություն ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին: Անդրադառնալով համալսարանի կրթական և գիտական, ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի, ֆինանսական և վարչատնտեսական, սոցիալական ուղղություններով կատարված աշխատանքներին՝ նա առանձնացրեց ինչպես ձեռքբերումները, այնպես էլ բացթողումներն ու անելիքները:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանը մասնագետներ է պատրաստել 29 մասնագիտությունների գծով՝ 5 ֆակուլտետի 20 ամբիոնի միջոցով, որտեղ դասավանդել է 192 հիմնական դասախոս:

Ռեկտորը նշեց, որ կարևորելով դասախոսի արհեստավարժությունը, դասավանդման մեթոդիկան, աշխատանքներ են տարել հանրապետությունում առկա կարող ուժերի ներգրավման, գործընկեր բուհերի մասնագետների հրավիրման և կադրերի երիտասարդացման ուղղությամբ: Երկու տարի շարունակ աշխատանք է տարվել դասավանդվող բոլոր առարկաների էլեկտրոնային դասախոսությունների փաթեթների կազմման և դրանք ուսանողներին հասանելի դարձնելու ուղղությամբ:

Համալսարանը շարունակում է աջակցել դասախոսների մասնագիտական աճին: Հաշվետու տարում թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 7 հոգի, մեկը՝ դոկտորական:

Բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 2356, մագիստրատուրայինը՝ 317: Համալսարանի ասպիրանտները 4-ն էին՝ նախորդ տարվա 5-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, համալսարանում նկատվում է ուսանողների թվի նվազման միտում: Այսպես, վեց տարի առաջ ունեցած 4159 ուսանողի փոխարեն անցյալ տարի նրանց թիվը 2677 էր:

ԱրՊՀ հեռահար նպատակն իր՝ որպես գիտական առաջատար օղակի, կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը, ինչը առկա պայմաններում ռեկտորն անիրական է համարում՝ որպես հիմնավորում բերելով գիտությանն ուղղվող ծախսերի չափը, որը բուհի նախահաշվում կազմել է 2,5 մլն դրամ կամ ընդհանուրի ընդամենը 0,2 տոկոսը: Գիտությունը երիտասարդ կադրերին շարունակում է չհրապուրել, տնտեսությունից առանձին հետազոտական պատվեր համալսարանը չի ստանում, հետևաբար և՝ եկամուտներ:

Այդուհանդերձ, գիտական միջոցառումները տարվա ընթացքում համալսարանում քիչ չեն եղել: Կազմակերպվել են գիտաժողովներ, տարաբնույթ քննարկումներ և ընթերցումներ: Համալսարանականները մասնակցել են նաև այլ բուհերում կազմակերպված միջոցառումներին:

Որոշակի հաջողություններ են արձանագրվել համագործակցության ուղղությամբ. ՀՀ և արտերկրի 30 բուհերի հետ ԱրՊՀ-ն պայմանագրեր ունի, հաշվետու տարում ավելացել է ևս մեկը՝ ՌԴ Օրյոլի Տուրգենևի անվան պետական համալսարանի հետ: Հատկապես ակտիվ էր համագործակցությունը ՀՀ պետական տնտեսագիտական համալսարանի հետ, որի հետ նախաձեռնվեցին և կազմակերպվեցին պետական հնչողություն ստացած մի շարք միջոցառումներ, ԵՊՀ-ի, մասնավորապես, իրավաբանական ֆակուլտետի հետ, որի առհավատչյան կրթական ծրագրերի թարմացումն է, իրավաբանական կլինիկայի բացումը, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ, որը նպաստել է ԱրՊՀ-ում հոգեբանական կենտրոնի գործարկմանը:

Ռեկտորը նշեց, որ համալսարանը գտնվում է երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում, համալսարանի կյանքի համար շրջադարձային կլինեն ԱՀ Նախագահի անմիջական հոգածությամբ գլխավոր մասնաշենքի հիմնանորոգումն ու տեխնիկական վերազինումը:

2017թ. համալսարանի ֆինանսական ծախսերի կառուցվածքը չի փոխվել. եկամուտների գերակշիռ մասը գոյանում է ուսանողների ուսման վարձավճարներից, ծախսերի 88 տոկոսը կազմում է աշխատավարձը:

Ռեկտորի տեսակետով՝ համալսարանում իրականացվող բարեփոխումների ընթացքը պետք է պայմանավորի հետևյալ հիմնախնդիրների լուծումը՝ կրթության թույլ կապը տնտեսության և հասարակության հետ, հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին կրթության համակարգի ոչ արդյունավետ արձագանքը, շրջանավարտների սոսկ տեսական պատրաստվածությունը՝ առանց մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ կիրառական կարողությունների և հմտությունների ոչ բավարար մակարդակը, կրթական ծրագրերի ոչ լիարժեք համադրելիությունը միջազգային չափանիշներին, ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոչ բավարար հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, ժամանակակից պահանջներին ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազայի ոչ լիարժեք համապատասխանությունը, կրթության ֆինանսավորման և դրա արդյունավետ օգտագործման մեխանիզմների անկատարությունը, կրթության կառավարման բոլոր մակարդակներում կառավարչական կարողությունների և կառավարման արդյունավետ մեխանիզմների ոչ պատշաճ ձևավորվածությունը, կրթության ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների լիարժեք ներդրումն ապահովող մասնագիտական զարգացման համակարգի անկատարությունը:

Հաշվետվության շուրջ եղան ելույթներ՝ մտահոգություններով:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանի մտահոգությունը վերաբերում էր համալսարանի՝ սպասվող հավատարմագրմանը, որը, ըստ նրա, աշխատատար, բարդ գործընթաց է և մարդկային ու ֆինանսական մեծ ռեսուրսներ է պահանջում: Բնագիտության ֆակուլտետի դեկան Վոլոդյա Միրզոյանը տարիներ շարունակ բարձրացնում է նույն՝ ֆակուլտետի ուսանողների թվի անշեղ նվազման հարցը: Տնտեսական հարցերով պրոռեկտոր Կարեն Առուշանյանին մտահոգողը գլխավոր շենքի հիմնանորոգման հետ կապված՝ գույքի տեղափոխման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունն է: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը, թվարկելով տնտեսագետ ուսանողների մի շարք հաջողություններ, կրթության որակի բարձրացման ուղղությամբ կարևորեց դասախոսների մասնագիտական կարողությունների բարելավման գործում նրանց վերապատրաստումը հանրապետության սահմաններից դուրս կազմակերպելն ու օտարերկրյա փորձի ուսումնասիրումը, բուհ-տնտեսություն կապը: Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը բարձրացրեց ուսուցչական կադրերի պատրաստման հետագա բարելավման ուղղությամբ դպրոցի լավագույն շրջանավարտներին մանկավարժական մասնագիտություն ուղղորդելու հարցը: Նրա առաջարկությունը կիսեց խորհրդի անդամ, դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը:

ԱՀ ԿԳՍ փոխնախարար Արմեն Սարգսյանը խիստ արտահայտվեց համալսարանի «Գիտական տեղեկագրի» որակի և գիտական բովանդակության վերաբերյալ: Նաև անարդարացի համարեց, որ ժամավճարով աշխատող դասախոսը նույն դրույքի դիմաց երկու անգամ պակաս է վճարվում հիմնական դասախոսի համեմատությամբ:

Խորհրդի նիստում ելույթ ունեցավ ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը՝ հիմնականում կանգ առնելով համալսարանի անելիքների վրա և պարզաբանումներ տվեց հնչած հարցերի առնչությամբ:

Նրա խոսքով՝ ակնհայտ են վերջին տարիներին բուհի գործունեությունը կանոնակարգելուն ուղղված ջանքերն ու արդյունքը: Մատնանշված խնդիրներն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

☞2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Հունվարի 19-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ համագործակցության հուշագրի ստորագրում ԿԳՍՆ և ՀՀ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) միջև:

Նախարար Նարինե Աղաբալյանն իր ողջույնի խոսքում նշեց, որ Հուշագրի ստորագրումն ամրագրում է 2015 թվականից միության և նախարարության միջև սկզբնավորված համագործակցությունը կրթության ոլորտում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի իրականացման միջոցով: Նրա խոսքով՝ Հուշագրի ստորագրմամբ ամրագրում են նաև համագործակցության շարունակականության, ինչպես նաև ծրագրի իրականացման գործում ջանքերի և միջոցների հայթայթման պատրաստակամությունը: Նախարարն ընդգծեց տեղեկատվական տեխնոլոգիաների դերակատարությունը մեր կյանքում և ընդհանրապես երկրների զարգացման գործում: Ըստ նրա՝ շատ կարևոր է, որ այդ կրթության հիմքն ամրապնդվում է դպրոցում նաև այս լաբորատորիաների ներդրման միջոցով: «Արցախն ունի մտավոր ներուժ, և բոլոր պայմանները կստեղծվեն մեր երեխաների կարողությունները զարգացնելու համար»,- նշեց նախարարը:

ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը իր խոսքում բացառիկ համարեց ներկա ժամանակաշրջանը. դա բարենպաստ է այն իմաստով, որ մարդուն հասանելի են բոլոր կրթական ռեսուրսները, և եթե նա ցանկություն ունի, կարող է իր կրթական պահանջները բավարարել գրեթե բոլոր ուղղություններով: Ժամանակաշրջանը բացառիկ է նաև այն առումով, որ, կապված աշխարհում տեխնոլոգիական արագընթաց փոփոխությունների հետ, կա մասնագետների մեծ պահանջարկ: Այսպես՝ 2016թ. միայն ԱՄՆ-ում և Եվրոպայում ՏՏ ոլորտում 2 մլն մասնագետի պահանջարկ կար: Կանխատեսվում է, որ այդ թիվը 2022թ. կհասնի 4-5 մլն-ի: Մյուս կողմից, Արցախի և Հայաստանի՝ պատերազմական իրավիճակում գտնվելու հանգամանքը ստիպում է ավելի շատ աշխատել այդ ուղղությամբ: 2016թ. ապրիլը ցույց տվեց, որ այսօրվա պատերազմը տեխնոլոգիական պատերազմ է: «Իրականում մարդ կարող է շատ հերոս լինել, բայց եթե որոշակի անջրպետ կա քո և հակառակորդի միջև, քո հերոսությունը կարող է դառնալ նահատակություն: Դրա համար մեր հերոսությունը պետք է ուղղել դեպի տեղեկատվական տեխնոլոգիաները, հերոսին սովորեցնել տեխնոլոգիաներ օգտագործել մարտի դաշտում և հաղթել»,- ասաց նա՝ խորին համոզմունք հայտնելով, որ այդ ամենը ճիշտ կազմակերպելու դեպքում մեր լիակատար հաղթանակը հեռու չէ: Ըստ նրա՝ «Արմաթ» լաբորատորիան այս գործընթացի զարգացման գործիքներից մեկն է: Ծրագիրը ներառում է ծրագրավորման, եռաչափ մոդելավորման, ռոբոտաշինության և այլ հմտությունների համապարփակ ուսուցում, ինչպես նաև տարատեսակ կարողությունների և ազգային, մշակութային արժեքների ուսուցմամբ ամառային ճամբարներ դպրոցականների համար:

Նույն օրը Մարտունու շրջանի Նորշենի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ Արցախում 9-րդ, իսկ ամբողջ Հայաստանում՝ 221-րդ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հանդիսավոր բացման արարողությունը: Ն. Աղաբալյանն ազդարարեց, որ հաջորդը լինելու է Մատաղիսում՝ «Բեյզ Մեթըլս» ընկերության հովանավորությամբ:

Սեփ. լրատվություն
Տես նաև՝ էջ 2

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՐՄԱՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 19-ին հիշարժան (գուցե և՝ պատմական) իրադարձություն տեղի ունեցավ Մարտունու շրջանի Նորշեն համայնքում: Գյուղի Լեոնիդ Հուրունցի անվան միջնակարգ դպրոցում միանգամից բացվեցին երկու՝ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) 221-րդ «Արմաթ» ինժեներական և Awesome Foundation Yerevan-ի հովանավորած ՆորՇենԼաբ լաբորատորիաները: Նշանակալից այդ առիթով Նորշեն էին այցելել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանը, ԻՏՁՄ աշխատակիցներ՝ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանի գլխավորությամբ, հյուրեր, նորշենցիներ, հարևան դպրոցների ներկայացուցիչներ, դպրոցականներ:

Ներկաները նախ վայելեցին Նորշենի դպրոցականների «Մոնթե» ազգագրական պարախմբի կատարումները: Գեղարվեստական ցուցադրության ընթացքում աշակերտներն իրենց երախտագիտությունը հայտնեցին բոլոր նրանց, ովքեր նպաստել են, որպեսզի իրենց դպրոցական առօրյան, հետագայում և կյանքը դառնան ավելի գունեղ և իմաստալից: Իսկ այդ ամենի «մեղավորը» ֆիզիկայի նորանշանակ ուսուցիչ Արա Հարությունյանն է:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ»

Այս ծրագրով է երիտասարդ ինժեներ-մեխանիկ Արա Հարությունյանը Երևանից գործուղվել Նորշեն: Ծրագրի ղեկավարը և հիմնադիրը Լարիսա Հովհաննիսյանն է: Հարկ է փոքր-ինչ հանգամանալից ներկայացնել նրան: Նա մեր համերկրացի նշանավոր գրող Լեոնիդ Հուրունցի թոռնուհին է: Ծնվել է Երևանում՝ Մայա Հուրունցի և իռլանդական ծագումով ամերիկացի Ջոն Պատրիկ Ռայանի ընտանիքում: Երբ Լարիսան երեք ամսական էր, ընտանիքը տեղափոխվում է նախ Կալիֆոռնիա, ապա՝ Ռուսաստան: Մանկությունը Լարիսան անցկացրել է Մոսկվայում և Երևանում: Դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակելու նպատակով մեկնում է ԱՄՆ:

2010թ. Լարիսան միացավ «Դասավանդի՛ր, Ամերիկա» ոչ առևտրային կազմակերպությանը, որի առաքելությունն է հավաքագրել, վերապատրաստել ապագա խոստումնալից առաջնորդներին, զարգացնել և հզորացնել կրթության անաչառության և գերազանցության շարժումը: Կազմակերպությունն ընտրում և հավաքագրում է բարձրակարգ համալսարանների շրջանավարտներին և խթանում, որպեսզի նրանք ուսուցչությամբ զբաղվեն: Լարիսան «Դասավանդի՛ր, Ամերիկա» ծրագրի շրջանակներում կամավորության սկզբունքով նշանակվեց Արիզոնայի Գլենդել քաղաքի տարրական և միջին դպրոցում՝ որպես հատուկ կրթության մանկավարժ: Ոգեշնչված Արիզոնայի իր ուսուցչական փորձառությամբ՝ 2013թ. Լարիսան որոշում է վերադառնալ Հայաստան և հիմնադրել «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագիրը, որի նպատակն է բարելավել կրթական հնարավորությունները Հայաստանի բոլոր երեխաների համար և բացահայտել հայրենիքի երիտասարդների հսկայական ներուժը: Կազմակերպությունը հավաքագրում և վերապատրաստում է երիտասարդ մասնագետներ և ուղարկում Հայաստանի հեռավոր գյուղերի դպրոցները, որտեղ կա մասնագետների կարիք: Ծրագրի տևողությունն առնվազն երկու տարի է, որից հետո երիտասարդ ուսուցիչն ինքը կարող է ընտրել՝ շարունակե՞լ դասավանդելը, թե՞ ոչ:

Դասասենյակից դուրս արտադպրոցական պարապմունքների և համայնքային զանազան նախագծերի միջոցով ուսուցիչներն օգնում են աշակերտներին զարգացնելու ոչ ակադեմիական հմտություններ, որոնց կարիքը նրանք ունենալու են իրենց ողջ կյանքում:

Լարիսան աչքի է ընկնում նաև երաժշտական ունակություններով: 2015թ. «System of A Down» խմբի մենակատար Սերժ Թանկյանի հետ ձայնագրել է «Արի, իմ սոխակ» օրորոցայինը, որը դարձավ Հայոց ցեղասպանության թեմայով նկարահանված «1915» հոգեբանական թրիլլերի սաունդթրեքը: Լարիսան կրում է ամուսնու՝ ամերիկահայ գրող և ռեժիսոր Կարին Հովհաննիսյանի (քաղաքական գործիչ Ռաֆֆի Հովհաննիսյանի որդիներից մեկն է) ազգանունը: Նրանք ապրում են Երևանում:

Բացի իր մասնագիտական գործունեությունից Լարիսա Հովհաննիսյանը կրթական ակտիվիստ է: Իր հարցազրույցներից մեկում նա ասել է. «Ես խորապես համոզված եմ, որ փոփոխությունը, իսկական, իմաստալից փոփոխությունը սկսվում է մեր դպրոցներից»:

Հունվարի 19-ին Լարիսա Հովհաննիսյանը նույնպես Նորշենում էր: Մեզ հետ զրույցում նա ասաց, որ եկել է իր ուսուցչի՝ Արա Հարությունյանի ստեղծած լաբորատորիայի բացմանը. «Նորշենը ինձ համար յուրահատուկ տեղ է, որովհետև իմ պապիկի՝ Լեոնիդ Հուրունցի գյուղն է, և ես շատ հպարտ եմ, որ իմ պրոֆեսիոնալ կյանքում կարող եմ ինչ-որ մի ներդրում անել նրա դպրոցի համար»:

Արդեն պարզ է, թե ինչու է ԻՏՁՄ-ն հերթական «Արմաթի» վայր ընտրել Նորշենը: Ինչպես տե-

ղեկացրեց նրա գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը, նպատակ ունենալով Հայաստանը դարձնել տեխնոլոգիական երկիր, նախաձեռնել է Հայաստանի (Արցախի) դպրոցներում բացել ինժեներական լաբորատորիաներ: Նրա խոսքով՝ 1980թ. Հայաստանում արտադրվում էր ամբողջ Խորհրդային Միության ռազմական էլեկտրոնիկայի 1/3-ը: «Աշխարհի մեծերը չուզեցան, որ այս տարածաշրջանում հզոր արդյունաբերական երկիր լինի, և դրանով է պայմանավորված, որ հարվածում են ու չեն թողնում, որ Հայաստանը զարգանա»,-ասաց նա և տեղեկացրեց, որ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների բացումը դպրոցներում Հայաստանը տեխնոլոգիական երկիր դարձնելու ծրագրի մի մասն է միայն: Նպատակն է՝ բոլոր դպրոցներում բացել, քանի որ դրանք հնարավորություն են տալիս բարելավել ինժեներական կրթության մակարդակը, նպաստում են նոր տեխնոլոգիական սերնդի զարգացմանը ու երկիրը դարձնում մրցունակ:

Եվ հերթով լաբորատորիաներ են բացում այն դպրոցներում, որտեղ կան տեխնիկական ուղղվածության նվիրյալ ուսուցիչներ, որոնք կարող են ոգևորել աշակերտներին, մանկավարժական գործունեություն իրականացնելիս ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, վերլուծական մտածելակերպ, չեն խուսափում նորարարություններից, նախաձեռնող են, ունեն կազմակերպչական ջիղ: Նորշենում, ի դեմս Արա Հարությունյանի, ԻՏՁՄ ղեկավարությունը տեսավ այդ նորարարին, և այստեղ արմատ գցեց հերթական «Արմաթ»-ը:

Մեզ տված ճեպազրույցում Արա Հարությունյանն ասաց, որ մանկավարժական կրթություն չունի: «Կարծում եմ՝ դա այնքան կարևոր չէ, որքան ցանկությունը՝ ուսուցիչ աշխատելու: Եթե ցանկություն լինում է, մեթոդաբանությունն էլ գալիս է: Ցանկացած ոլորտում զարգանալու համար բոլոր հնարավորությունները կան: Մանկավարժական փորձ ունեի բարեգործական հիմունքներով, բնագիտական, հայագիտական դասընթացներ վարել էի, իսկ մասնագիտական չէր եղել, դա էլ եղավ: Զարգանալու տեղ դեռ ունեմ, իհարկե, ինքս դա զգում եմ ամեն դասից: Հուսով եմ, որ կվարպետանամ: Ինձ մեթոդաբանությունը շատ է հետաքրքրում: Հույս ունեմ, որ մի օր մեթոդաբանության մեջ փոփոխություններ կմտցնեմ Արցախում և Հայաստանում, հայկական կրթօջախներում»: Մեր այն հարցին, թե ինչպես է վերաբերվում դասագրքերին, որոնց բարդությունից մեր ուսուցիչները միշտ բողոքում են, դասավանդու՞մ է նա դրանցով, Արան այսպես պատասխանեց. «Դասավանդում եմ, բայց հավելյալ դասագրքերից էլ եմ օգտվում: Բարդ չեն, ձևակերպումներն են վատ, դժվար չէ, եթե ճիշտ մոտեցումը գտնես: Գործնական պարապմունքները պետք է երեխային սովորեցնես այնպես, որ նա զգայարաններով էլ յուրացնի: Զգայարաններով ավելի արագ է սովորում. եթե նրա համար հեշտ է շոշափելով սովորելը, պետք է թույլ տաս, որ շոշափի»:

Նշենք, որ Արա Հարությունյանն ավարտել է Երևանի ճարտարագիտական համալսարանը՝ ինժեներ-մեխանիկի մասնագիտությամբ: Իր մասնագիտությամբ աշխատել է երևանյան մի ընկերությունում, երկու տարի մասնագիտական գործուղման մեջ է եղել Ռուսաստանի Տոլյատի քաղաքում: Նոր ուսումնականից Նորշենի դպրոցում նա ֆիզիկա է դասավանդում 7-12-րդ դասարաններում, ազգային պար ուսուցանում դպրոցի բոլոր 54 աշակերտներին:

Ելույթ ունենալով իր լաբորատորիայի բացմանը՝ Արա Հարությունյանը խոստովանեց, որ իրեն վիճակված էր հաղթահարել բազում խնդիրներ. «Հայտնվելով Նորշենում՝ բախվեցի մեր կրթական հիմնախնդիրներին: Հասկացա, որ դասավանդման հին մեթոդներով հաջողության չեմ հասնի: Մի կողմից էլ մյուս մարտահրավերները՝ վատ ձևակերպումներով դասագրքերը, լաբորատոր ռեսուրսների, աշակերտների հետաքրքրության բացակայությունը ֆիզիկայի և ընդհանրապես բնագիտական առարկաների նկատմամբ… Ու սկսում ես հերթով լուծել այդ խնդիրները՝ սկսելով նրանից, որ սահմանում ես կանոններ, այդ թվում՝ ժպտալ միմյանց լուրջ դեմք ընդունելու փոխարեն, փորձում ես լցնել դատարկ լսարանը, մտցնում ես թիմի գաղափարը, գյուղի եղածով գործնական դասեր ես հորինում, ֆիզիկան գունավորում, համայնքային ծրագրեր անում, բացում ազգային պարերի խմբակ, խաղում երեխաների հետ, գնահատման մեթոդաբանությունը փոխում, և ծնվում է ՆորՇենԼաբը»,- դասավանդման չորս ամիսների ընթացքում հանդիպած մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղղությամբ գործադրած նորամուծություններն է փորձում համառոտ ներկայացնել երիտասարդ մանկավարժը:

Միջոցառման ընթացքում ներկաները ականատես եղան նրա վարած դասի և գնահատման մի նմուշի:

«Արմաթ» լաբորատորիան ոչ միայն ռոբոտաշինության, այլև եռաչափ մոդելավորման, ծրագրավորման, ձեռներեցության, հմտություններ ձեռք բերելու միջոց է, որ երեխաները հետագայում կարողանան վարել բիզնես ծրագրեր, իրականացնել նախագծի մարքեթինգ, հաշվապահություն վարել և այլն:

Խմբակավար Արայի խոսքով՝ ՆորՇենԼաբը լաբորատորիա լինելուց բացի նաև փոքրիկ բիզնես կլինի դպրոցի աշակերտների համար: Իրենք նմանատիպ լաբորատորիաներ կբացեն մյուս դպրոցների համար, ինչը հնարավորություն կտա աշակերտներին նաև գումար վաստակել և կատարելագործել իրենց հմտությունները բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

ԳՅՈՒՂՆ ԷԼ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ IT ԿԵՆՏՐՈՆ

ԻՏՁՄ ծրագրի համակարգող Սեդրակ Վարդանյանը, շնորհավորելով նորշենցիներին նման տեխնոլոգիական հնարավորության համար, ընդգծեց այն, որ եթե որևէ նախաձեռնություն կա բարի, լավ գործ անելու, կգտնվեն մարդիկ, որոնք կաջակցեն, կօժանդակեն: Ահավասիկ, Արայի օրինակը. նրա կողմից նախաձեռնությունը եղավ, և շատ կարճ ժամանակում՝ ընդամենը երկու ամսում, իրականություն դարձավ «Արմաթ» լաբորատորիայի տեղադրումն այստեղ:

Նա տեղեկացրեց, որ Երևանում ընդամենը երեք դպրոցում է ստեղծվել այդպիսի լաբորատորիա, իսկ ամբողջ Հայաստանում՝ դպրոցների 17 տոկոսում: Ուգանդայի 50 դպրոցներից պատվեր են ստացել իրենց մոտ էլ տեղադրելու, Հնդկաստանից 3000 դպրոց է ցանկություն հայտնել: Ասել է թե՝ նորշենցիների համար սա եզակի հնարավորություն է, որը կնպաստի նրանց մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը և ժամանակակից աշխարհում դառնան մրցունակ մասնագետներ, տիրապետեն բարձր տեխնոլոգիաների, ստացած տեխնոլոգիական գիտելիքներն օգտագործեն ի շահ իրենց ընտանիքների, համայնքի, բանակի, Հայոց աշխարհի: Նա տեղեկացրեց նաև, որ Արցախում հնարավորություն է ստեղծվել ինժեներական լաբորատորիաների ավելի մեծ թափով ներդրմանը նույն այդ օրը ԱՀ ԿԳՍ նախարարի և ԻՏՁՄ ղեկավարի կողմից ստորագրված համագործակցության հուշագրի արդյունքում:

ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, շնորհավորելով նորշենցիներին, արձանագրեց երկու ուրախալի փաստ. նախ՝ թե ինչպես կարող է մեկ նվիրյալ ուսուցիչը ոգևորություն առաջացնել մի փոքրիկ դպրոցում և փոխել մտածելակերպ: Երկրորդ՝ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի բացումը, որը նոր մշակույթ է ձևավորելու, և արդեն Հուշագրի ստորագրման ժամանակ արծարծվել է, որ Արցախում լաբորատորիաների միջև մրցույթներ անցկացվեն, և դա կարող է տեղի ունենալ հենց Նորշենում: Նա ընդունեց նաև Արա Հարությունյանի առաջարկը. ի նշանավորումն այդ օրվա՝ ամեն տարի Նորշենում անցկացնել Արցախի տեխնոլոգիական լաբորատորիաների ցուցահանդես:

«Ցանկացած նախագծի հաջողություն կախված է նրանից, թե ովքեր են իրականացնողները, ինչքանով են նվիրված, և ինչքան մեծ է նրանց ցանկությունն ու կամքը այն իրականացնելու համար: Տեսնելով, թե ձեզ ինչ է հաջողվել անել այս կարճ ժամանակաընթացքում, ինչպիսի փոփոխություններ է հաջողվել իրականացնել, ավելի քան վստահ եմ, որ դա կարելի է իրագործել ամբողջ երկրի մասշտաբով: Բայց ամենակարևորը՝ այս լաբորատորիայի ստեղծումը իսկապես կփոխի մտածելակերպ, որ բարեկեցություն փնտրելու համար պարտադիր չէ գնալ օվկիանոսից այն կողմ կամ օտար ափեր, այլ կարելի է հայրենի եզերքում մնալով՝ արարել, վաստակել և ապրել լիարժեք կյանքով: Հավակնել թափուր աշխատատեղի ոչ միայն Նորշենում կամ Արցախում, այլև երկրագնդի ցանկացած կետում լինել այդ աշխատու-

ժը՝ չհեռանալով երկրից: Թերևս սա է ամենակարևորը, որ ջնջվում են բոլոր սահմանները, և այն համոզմունքն է ձևավորվում, թե չճանաչված կամ փոքր լինելը պատճառ չէ, որպեսզի մենք կարողանանք լինել կայացած, ուժեղ և ապրենք բարեկեցիկ կյանքով: Ունենալով այսպիսի շնորհալի սերունդ, դժվար է կասկածել, որ հնարավոր է՝ հաջողության չհասնենք»,- ասաց նախարարը՝ հավելելով, որ նախարարությունը հետևողական է լինելու, որպեսզի այս հնարավորություններին ավելացվեն նորերը, և տարբեր ուղղություններով զարգացման իրական հեռանկարներ բացվեն մեր երեխաների համար:

Իսկ Կ. Վարդանյանը համոզմունք հայտնեց, որ 3-4 տարի հետո Նորշենում գործելու են վեբ տեխնոլոգիաների ընկերություններ, որոնք կարող են իրենց աշխատանքը հայթայթել թե՛ Երևանում ու թե՛ միջազգային հարթակներում և տեղական բյուջեի մուտքերն ավելացնել: Նա տեղեկացրեց, որ շնորհիվ ապակենտրոնացման հզորացման ուղղությամբ իրենց աշխատանքի՝ Հայաստանը ձեռք է բերել 2018թ. համաշխարհային կոնգրես անցկացնելու իրավունք: «Ամբողջ աշխարհը կարծում է, թե IT կենտրոնը Սան-Ֆրանցիսկոյում է, բայց իրականում այդպես չէ, իրականում ով որոշում է, որ ինքը կենտրոն է և կենտրոնի վարքագիծ է ցուցադրում, ուրեմն՝ կենտրոն է»,- ասաց նա՝դրանով առաջ մղելով այն միտքը, որ պետք է փոխվի մտայնությունը, թե մենք փոքր ենք: «Մենք դա ընդունենք որպես նպատակ և ցույց տանք բոլոր գյուղերին, թե դուք գյուղ չեք, դուք առևտրային կենտրոն եք»:

Ի հավաստումն ասվածի՝ Ն. Աղաբալյանը նախարարության կողմից առաջին պատվերը տվեց Նորշենի «Արմաթ»-ին՝ սարքել լաբորատորիաների միջև խոստացված մրցույթի մրցանակները:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆ Ի ԶՈՐՈՒ Է ԼՈՒԾՈՒՄ ՏԱԼ ԾԱԳՈՂ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ»

ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանի՝ հունվարի 24-ին ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումը նվիրված էր 2017թ. բանակային տարվա արդյունքների ամփոփմանը: ՊԲ հրամանատարը սկզբում անդրադարձավ հակառակորդի կողմից իրականացված գործողություններին: Ինչպես նախորդ տարիներին, 2017թ. նույնպես թշնամին միջազգային հարթակներում փորձել է առաջ տանել իր տեսակետը՝ հավատարիմ մնալով իր ռազմական հռետորաբանությանը: Շարունակել է առաջնային գիծը պահել լարված վիճակում, որի համար պարբերաբար առաջնագիծ է հանել հատուկ նշանակության ստորաբաժանումներ: «Կարելի է ասել, տարվա ընթացքում դրանք չեն էլ կտրվել առաջնային գծից: Պարբերաբար հանել է դիպուկահարների խմբեր: Դա հատկապես ընդգծված է եղել տոն օրերին, որ մեր հասարկության մեջ խուճապ առաջացնի, բայց նրան չի հաջողվել»,- տեղեկացրեց նախարարը: Նա առանձնացրեց այդ լարվածության մի քանի պահ. փետրվարի 24-25-ը, կիրառելով խոշոր գնդացիրներ, խոշոր տրամաչափի դիպուկահար զենքեր, կրակ է բացել, բայց, շնորհիվ մեր դիրքապահների զգոնության, կրել է կորուստներ(հինգ դիակ մնացել է մարտի դաշտում, երեք վիրավոր հանվել է, որոնցից մեկը հոսպիտալում մահացել է): Հակառակորդն ունեցել է վեց կորուստ, բոլորն էլ՝ հատուկջոկատայիններ, և իհարկե, հետևություն է արել, հաղորդեց նախարարը: Մյուս երկու լարվածությունները մայիսին և հունիսին էին: Բոլոր դեպքերում էլ, շնորհիվ մարտական հերթապահություն տանող մեր զինծառայողների աչալրջության, հաջողվել է կասեցնել այս կրակահերթերը, տրվել է համարժեք պատասխան: «Չկա մի դեպք 2017թ. ընթացքում, որ ՊԲ զորամասերի ստորաբաժանումները համարժեք պատասխան տված չլինեն հակառակորդին»,-ասաց ՊԲ հրամանատարը:

Պաշտպանության բանակի ղեկավարությունը լավատեղյակ է թշնամու ճամբարում կատարվող ամեն շարժի, ուշի ուշով հետևել է հակառակորդի կողմից իրականացվող միջոցառումներին: Նախարարը տեղեկացրեց, որ ադրբեջանական կողմը տարվա ընթացքում շարունակել է ավելացնել իր ռազմական ներուժը, անց է կացրել չորս խոշոր օպերատիվ-մարտավարական զորավարժություն, որի ընթացքում ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է հարձակողական բնույթի խնդիրների վրա:

Գերատեսչության ղեկավարի հավաստմամբ՝ ՊԲ կողմից ձեռնարկվել են համարժեք քայլեր: Պաշտպանության նախարարի գնահատմամբ՝ տարին հարաբերական կայուն էր:

Լ. Մնացականյանը այնուհետև թվարկեց ՊԲ կողմից տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Առաջին հերթին իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ, ինչի արդյունքում Պաշտպանության բանակի հնարավորությունները բոլոր առումներով աճել են: Փոխվել են մոտեցումները պահեստազորայինների նկատմամբ, հավաքների միջոցով ավելացվել է ռազմաուսուցանված պահեստազորի քանակը բոլոր մասնագիտությունների գծով: 2017թ. ընթացքում կատարվել են նաև ընդհանուր օրենսդրական փոփոխություններ: 2018թ. նման փոփոխությունները կլինեն շարունակական:

Որպես հիմնական նպատակ՝ ընդգծվել են մարտական հերթապահության կրումը և Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումն ու դիրքապահ զինծառայողների համար ավելի անվտանգ պայմանների ստեղծումը: Կատարելագործվել են բոլոր ինժեներամրաշինական կառույցները, կահավորվել նոր դիրքեր: Շարունակական են եղել դիտարկման համակարգի կատարելագործման գործընթացները: 100 տոկոսով տեսանելի է առաջնագծի և մոտակա խորքային տարածքը թե՛ գիշերային և թե՛ցերեկային ժամերին, տեղեկացրեց նախարարը՝ վստահեցնելով, որ բանակի այսօրվա և 2016-ի հնարավորություններն իրար հետ համեմատելի չեն:

Ներկայում աշխատանքներ են տարվում ճանապարհային ցանցի կատարելագործման ուղղությամբ, ինչը, ըստ ռազմական գերատեսչության ղեկավարի, անչափ կարևոր է: Տարվա ընթացքում հրամանատարության ուշադրության կենտրոնում են եղել անձնակազմի անվտանգության ապահովման հարցերը: Այդ ուղղությամբ ևս որոշակի աշխատանքներ են տարվել: Սակայն դիպուկահարների կրակոցներից դեռևս ունենում ենք կորուստներ: Ըստ պաշտպանության նախարարի՝ այդ ուղղությամբ անելիքներ դեռ կան, ձգտելու են հնարավորինս բացառել նման դեպքերը: Առաջընթաց կա շտաբների պատրաստության, ներդաշնակ գործողությունների ապահովման ուղղությամբ: Անց են կացվել զորավարժություններ, ինչի արդյունքում բարձրացել է շտաբների պատրաստության մակարդակը: Կա որոշակի առաջընթաց և՛ հրետանու, և՛ հակաօդային պաշտպանության հնարավորություններն արդյունավետ կիրառելու առումով:

Անդրադառնալով տեխնիկական ու թիկունքային ապահովման խնդիրներին՝ գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանը նշեց, որ այս առումով հիմնական շեշտը դրվել է դաշտային պայմաններում միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կենսագործունեության ապահովման և մարտական գործողությունների ընթացքում անխափան մատակարարումների վրա: Տեխնիկայի այն համա-լրումը, որ ունեցել են տարվա ընթացքում, մի շարք հիմնախնդիրների իսպառ լուծում է տվել: Որոշակի աշխատանք է տարվել զինվորական կարգապահության ուղղությամբ, առկա է պատահարների նվազում: ՊԲ հրամանատարն ասաց, որ չնայած միջանձնային ու դժբախտ պատահարների դեպքերն իսպառ վերացնել չի հաջողվել, այնուհանդերձ, անցյալ տարվա համեմատությամբ դրանք նվազել են: Միջադեպերի թվով գրանցվել է մեկ աճ, բայց կորուստների առումով՝ 9 նվազում: Վիրավորվման դեպքերով դարձյալ կա նվազում՝ 110-ով: Զուգահեռներ Լ. Մնացականյանը անցկացրեց 2015թ. հետ, քանի որ 2016-ի ապրիլյան պատերազմը թույլ չի տալիս ճիշտ գնահատել իրավիճակը այդ առումով:

Նրա վստահեցմամբ՝ այսօր թշնամու դիվերիսոն-հետախուզական խմբերի ներթափանցման փորձեր գրեթե չկան՝ պայմանավորված նորագույն տեխնոլոգիաների առկայությամբ և զինվորների պատրաստվածությամբ: Նախարարի խոսքով՝ հակառակորդի մի շարք դիվերսիոն փորձերի կանխումը հայկական առաջապահ զորամիավորումների կողմից ադրբեջանական կողմին ստիպել է գրեթե հրաժարվել այդ մարտավարությունից:

Պաշտպանության բանակում տեղի ունեցող արագ համալրումների՝ հակառակորդի ցանկացած մարտավարության փոփոխության հայկական կողմը պատրաստ է լիարժեք հակահարված տալ:

Պաշտպանական գերատեսչության ղեկավարի կարծիքով՝ անելիքներ դեռևս կան, աշխատելու տեղ՝ նույնպես: Պաշտպանության բանակն ի զորու է լուծում տալ ծագող բոլոր խնդիրներին, վստահեցրեց նա:

Ամփոփելով իր խոսքը՝ գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանը ասաց, որ 2017-ին նույնպես Պաշտպանության բանակը կատարել է իր վրա դրված ամենակարևոր խնդիրը՝ խաղաղություն պարտադրել թշնամուն և ապահովել ժողովրդի անվտանգությունը:

Պաշտպանության նախարարը նաև պատասխանեց լրագրողների բազաբնույթ հարցերին:

Ի՞նչ զարգացումներ են սպասվում բանակ-դպրոց կապի մեջ հարցին նախարարը այսպես պատասխանեց. «Մտադիր ենք ծրագրային փոփոխուբիուններ առաջարկել դպրոցներում դասավանդվող ՆԶՊ առարկայից, և այդ ուղղությամբ արդեն աշխատանքներ են տարվում: Գտնում ենք, որ ներկայիս ծրագրերը չեն բավարում մեր պահանջները. նախազորակոչային տարիքում պետք է սերմանել այնպիսի տրամադրություն, որ աշակերտներն ավելի մեծ ցանկություն ունենան ընտրել զինվորականի մասնագիտությունը: Առաջին հերթին զինղեկն ինքը պետք է հետաքրքրություն առաջացնի իր առարկայի նկատմամբ: Ընդհանուր առմամբ այդ հարցը կրթության, գիտության և սպորտի նախարարությանն է վերաբերում, սակայն մենք էլ մեր հերթին տրամադրում ենք նյութատեխնիկական բազա: Այստեղ անելիքներ շատ ունենք»:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

1 ☞ ԱրՊՀ անելիքներից նա հատկանշեց առաջիկայում սպասվող յուրօրինակ փորձության շրջանը հաղթահարելը, ինչը պայմանավորված է նրանով, որ բուհն ընթացիկ և առաջիկա տարիներին պետք է կարողանա համադրել հավատարմագրման, «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի գործարկման գործընթացները, համալսարանի գլխավոր շենքի հիմնանորոգման հետ կապված խնդիրները:

Անդրադառնալով հավատարմագրման հետ կապված մտահոգությանը՝ նախարարն ասաց, որ ամենադժվարը ոչ այնքան ֆինանսները հաղթահարելն է, որքան՝ դրված պահանջներին, որակի չափանիշներին բուհի համապատասխանեցումը, առանց որի նա չի կարող մրցունակ լինել: Նա տեղեկացրեց, որ այդ առումով առաջիկայում նախատեսվում է հանդիպում ՀՀ ԿԳՍ նախարարի և Որակի ապահովման Հայաստանի կենտրոնի նախագահի հետ, որի ժամանակ կպարզաբանվեն հուզող հարցերը:

Բնագիտական առարկաների մասնագետների պատրաստման մասով Ն. Աղաբալյանը կարծիք հայտնեց, որ հարկ է վերանայել մասնագիտությունների ցանկը, որը թելադրում է ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը: Նրա խոսքով՝ այդ նպատակով զուգահեռ աշխատանքներ պետք է տարվեն հանրակրթության, բարձրագույն կրթության և ընդհանրապես մասնագիտական կրթության ոլորտում: Այսօր միջոցառումներ են ձեռնարկվել դպրոցները քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, կենսաբանության լաբորատորիաներով վերազինման ուղղությամբ, պիտի կարողանալ նախ այդ առարկաների դասավանդման մակարդակը բարձրացնել, որ կարողանան հետաքրքրություն առաջացնել աշակերտների մոտ: Եվ ընդհանրապես, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ հանրակրթության ոլորտում նախարարության կողմից սկսվել է ինժեներական լաբորատորիաների ներդրումը դպրոցներում: Դա է այսօր որոշում զարգացումը. ցանկացած առաջադիմություն կախված է նրանից, թե ինչքանով են զարգացած այդ տեխնոլոգիաները տվյալ երկրում, կրթական համակարգում: Այս ուղղությամբ՝ որպես կատարված քայլ, մասնավորի հետ համագործակցությամբ, կոնկրետ՝ «Բեյզ մեթըլս» ընկերության կողմից, ստեղծվել է մրցանակային ֆոնդ՝ դպրոցականներին խրախուսելու նպատակով, և որպես անվանակարգեր ընտրվել են հենց ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն առարկաները: Այդ առարկաներից լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները, ինչպես նաև նաև Թումոյի, «Արմաթ-ի», ռազմամարզական վարժարանի լավագույն սաները կխրախուսվեն տարեվերջին: Սա ևս խթան կդառնա այս ուղղությունների հետագա զարգացման համար, տեղեկացրեց Ն.Աղաբալյանը:

«Գործարար շրջանակների մեր ներկայացուցիչները համագործակցության համար միշտ էլ պատրաստակամ են, պարզապես երևի մեր նախաձեռնողականությունն է թույլ, առաջիկայում կփորձենք այդպիսի հնարավորություններ ստեղծել»,- ասաց նախարարը՝ հավելելով, որ նախարարությունը քննարկումներ է իրականացնում այդ ուղղությամբ:

Ինչ վերաբերում է դրսում դասախոսների վերապատրաստվելուն, այստեղ գլխավոր խնդիրը պետք է լինի գործնական համագործակցությունը տարբեր բուհերի հետ, փոխանակումների և վերապատրաստման ծրագրերից օգտվելը, նշեց նա:

Նախարարի կարծիքով՝ պետք է գտնել այլընտրանքային ֆինանսավորման միջոցներ, քանի որ համալսարանի կախվածությունն ուսման վարձավճարներից չի կարող ապահովել կրթության բարձր որակ:

Վերջում Ն. Աղաբալյանը մաղթեց մեծ կամք, ուժ, համբերություն՝ համատեղ հաղթահարելուծառացած խնդիրները, որպեսզի Արցախի պետական համալսարանը արժանի լինի իսկապես մայր բուհ լինելու կոչմանը:

Նիստում ամփոփիչ խոսքով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Ղուլյանը: «Հնչած ելույթներից յուրաքանչյուրում կա մի ինչ-որ կետ, որ պետք է հաշվի առնել հաջորդ աշխատանքների մեջ և ելնել այդ իրողություններից: ԱրՊՀ-ն այն հաստատությունն է, որը դիրքորոշում և քաղաքականություն է մշակում և պետք է անպայման թելադրի. սա է այդ պատասխանատվության բաժինը: Այսինքն՝ մենք ոչ միայն կրթության և գիտության հետ կապված հարցեր պետք է քննարկենք ու տարվա ընթացքում իրականացնենք, այլև պետք է հաշվի առնենք, որ սրանից կախված է երկրի ապագան եթե ոչ այսօր, ապա 5-10 տարի հետո»,- ասաց նա:

ԱրՊՀ խորհուրդը բավարար գնահատեց հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները, հաստատեց նոր տարվա ֆինանսական փաստաթուղթը:

Նիստում ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ԱԺ պատգամավոր և դասախոս Արթուր Թովմասյանը բուհի կյանքում ունեցած մեծ վաստակի համար արժանացավ համալսարանի բարձրագույն պարգևին՝ Ոսկե մեդալի:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՍՏԵՂԾԱԿԱՆ

ՊԵՏՔ Է ՋԱՆՔ ՉԽՆԱՅԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ ՃԻՇՏ ՈՒՂՂՈՐԴԵԼՈՒ

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը Ստեփանակերտում բացվել է 2015թ. սեպտեմբերին: 2016թ. դեկտեմբերի 29-ից կենտրոնը ղեկավարում է Կորյուն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ: Կատարված աշխատանքների և ծրագրերի մասին՝ ներկայացվող հարցազրույցում:

- Կորյուն, կցանկանայինք որոշ կենսագրական տեղեկություններ իմանալ Ձեր մասին:

- Ծնվել եմ Ֆրանսիայում՝ Փարիզ քաղաքում: Հայկական կրթություն չունեմ: Հայերենին առնչվել եմ ընտանիքում, այնուհետև՝ շաբաթօրյա հայկական կենտրոնում: Սովորել եմ ֆրանսիական դպրոցում: Հատուկ դպրոց էր. սա ուզում եմ ընդգծել, քանի որ այլընտրանքային կրթության մոտեցումներ ուներ: Ու ամբողջ կրթությունս մեկ դպրոցում եմ ստացել: Իր տիպով նոր դպրոց է, անունը հայերեն կոչվում է «Աղբյուր»: Բարձրագույն կրթությունս սկսել եմ Փարիզում, շարունակել Մարսելում, ավարտել Շվեդիայում: Նախնական մասնագիտական կրթությունս Փարիզում եղել է տնտեսագիտությունը, իսկ Մարսելում և Շվեդիայում՝ կառավարումը: Մեկ տարի աշխատել եմ Լոնդոնում, ճարտարապետական ստուդիայում՝ որպես նախագծեր ներկայացնող, մեկ տարի Բրյուսելում՝ որպես ֆինանսիստ ներդրումային բանկում, հետո վերադարձել եմ Փարիզ, մեկ տարի խորհրդատու աշխատել խորհրդատվական ընկերությունում, դրանից հետո «ուղիղ չվերթով» եկել եմ Ստեփանակերտ:

- Ապրել, սովորել, աշխատել եք Եվրոպայի սրտում, զարգացած երկրներից հետո եկել եք Արցախ, ի՞նչը Ձեզ ստիպեց:

- Ես կասեի նախ և առաջ՝ աշխատանքը: Մեծ սպասումներով եմ եկել Թումո, նրա առաքելության հանդեպ մեծ հավատ ունեմ: Հենց Թումոն ինձ բերեց Արցախ: Ծրագրել էի մի օր տեղափոխվեմ Հայաստան՝ կամ գործի բերումով, կամ թոշակի անցնելուց հետո: Ինձ մոտ այդ ցանկությունը միշտ եղել է, և Թումոն արագացրեց: Նախ աշխատանքն ինձ բերեց Արցախ, հետո բնականաբար և ինքը՝ Արցախն ամբողջությամբ: Իմ շրջապատում բավականին կարծիքներ հնչեցին. մի մասը խորհուրդ տվեց չգալ, մի մասը՝ որ ճիշտ եմ անում: Մեծ մասը «ոչ» ասաց՝ զուտ պրոֆեսիոնալ առումով. ինձ համար դա ա՞ճ է, թե՞ հակառակը: Դրա մեջ ես տեսա աճ:

- Ի՞նչ պատկերացում ունեիք Արցախի մասին:

- Որպես զբոսաշրջիկ երկու անգամ այցելել էի Արցախ: Երկու անգամն էլ՝ ընկերներով: Բայց, ճիշտն ասած, որևէ զգացում չունեցա, պարզապես տեսա Տիգրանակերտը, Գանձասարը, Ստեփանակերտը, Շուշին: Իսկ երբ վերջնականապես տեղափոխվեցի, ավելի մոտիկից ծանոթացա ժողովրդի հետ, նրա մտայնությանը, առօրյային՝ թե՛ դժվարություններին, թե՛ առավելություններին և թե՛ յուրահատկություններին:

- Ի՞նչ եք բերել Եվրոպայից և ի՞նչ եք այստեղ գտել:

- Եվրոպայից միգուցե տեմպն եմ բերել, զարգացման արագությունը, այսինքն՝ ինչպես տվյալ բանն արագ անել: Արագ տեմպերով զարգանալու անհրաժեշտություն կա, այսինքն՝ ոչ միայն զարգանանք, այլև զարգացման ընթացքն ավելի արագացնենք, որպեսզի մենք նույնպես կարողանանք վայելել այն, ինչ եվրոպացիներն ունեն: Իսկ Արցախից ես կվերցնեի մարդկային արժեքը, որը գնալով պակասում է Եվրոպայում ու իրականում անհետանում: Մեկը մյուսին օգնելը, իրար հետ համերաշխ ապրելը. սա զգացի իմ հարևանության մեջ, իմ անձնակազմի հետ, զգացի իմ ընկերական շրջապատում: Միշտ պատրաստ են իրար օգնել, ու դա նրանց համար ավելորդ բեռ չէ, իրենց առօրյայի մասն է:

- Ծնողներդ ինչպե՞ս են տանում երկար բացակայությունը:

- Տարբեր երկրներում եմ սովորել կամ աշխատել, հաճախ եմ եղել նրանցից հեռու, սովորեն, հասկանալի է, կարոտ կա: Ունեմ երկու քույր, մանկության ընկերներ, ընտանիքի անդամներ, բարեկամներ, բոլորի հետ կապը այս պահին վիրտուալ է: Բնական է, մայրս շատ է անհանգստանում, հատկապես ապրիլյան պատերազմի օրերին: Գալիս-գնում են տարին մեկ, ես մի անգամ եմ գնացել, անշուշտ, բավական կարոտել եմ:

- Թումոցիների ծնողների հետ ժողովում այսպիսի միտք եք հայտնել. թող նրանք չմտածեն, թե Եվրոպայի դպրոցներն ավելի բարձր են ու զարգացած, քան այստեղ, որ Դուք տեսնում եք, որ այստեղ շատ արագ է գնում այդ գործը, որ այս հարցում ոչ թե հավասարվում, այլ առաջ ենք անցնում օտարներից, և Թումոն լուռ հեղափոխություն է անում:

- Ես խորապես համոզված եմ, որ Թումոն մեծ ներդրում է անում նոր սերնդի կրթության ասպարեզում Հայաստանում և Արցախում: Դա կոչել եմ լուռ հեղափոխություն: Թե ինչքան եմ ճիշտ՝ ապագան կփաստի: Մենք մեր անձնակազմի հետ միասին միշտ այդ հեռանկարով ենք աշխատում: Կրթության ոլորտում արդյունքն իսկույն չենք տեսնում, այլ պետք է մի քանի տարի հետո դատենք, և մեզ էլ այդպես կդատեն՝ արդյո՞ք հաջողեցինք, թե՞ սխալ ճանապարհ էինք ընտրել: Ես հավատում եմ, որ ոչ միայն ճիշտ ճանապարհ ենք ընտրել, այլև հեղափոխություն ենք անում ունիվերսալ իմաստով կրթության ոլորտում: Թումոյում հատուկ մանկավարժական մոտեցումներ ենք ցուցաբերում՝ ինքնուսուցում, թիմային աշխատանք, նախագծի մտայնությամբ աշխատելը, ինչ-որ մի բան սկսելը՝ որպես նախագիծ ու դա ավարտին հասցնելը: Բոլոր կապերը՝ միջազգային կամ ոչ միջազգային, որ հաստատել ենք, շատ կարևոր են: Մենք 14 այնպիսի մասնագիտություններ ենք առաջարկում, որոնք խառնուրդ են արվեստի և տեխնոլոգիայի: Ու հավատում ենք, որ սա է ապագան: Եթե միայն տեխնոլոգիական կամ արվեստի թեքում ունենայինք, շատ չէինք տարբերվի մյուս կրթական հաստատություններից, նոր բան չէինք առաջարկի: Թումոյում նորարարությունը նաև սրանում է՝ արվեստի և տեխնոլոգիայի համատեղումով հասնում է ստեղծագործական հետաքրքիր արդյունքների: Մանկավարժական մոտեցումներն ու նորարարությունները, որ այստեղ ներմուծել ենք, ես կոչում եմ լուռ հեղափոխություն: Նրանք ազատ մտածելակերպով են մեծանում, համարձակ ու ինքնուրույն են լինելու, կկարողանան մեր հայ ազգին վերջապես այնպես աշխատեցնել, որ մեկը մյուսի հետ աշխատի, քանի որ դա ընդհանուր առմամբ հայերիս մոտ պակասում է: Բավական ուժեղ ինդիվիդուալներ ենք. անհատապես հայերը հետաքրքիր դիրքեր են գրավում, բայց թիմային աշխատանքում համեմատաբար թույլ ենք՝ Սփյուռքում թե Հայաստանում: Մենք փորձում ենք այդ բոլոր ուժերը համախմբել ու իրար հետ միասին հետաքրքիր նախագծերի հասնել: Մենք ոչ մի բանի դեմ չենք գնում, ընդհակառակը, փորձում ենք ինչ-որ մի նոր բան այստեղ առաջարկել, ու դա ինքնին հսկայական պայքար է: Տարիքային այս շեմի՝ 12-16 տարեկան պատանիները շատ նուրբ անձնավորություններ են, որոնց հանգիստ կարելի է շեղել, ազդել, դրա համար շատ ուշադիր պետք է լինել նրանց հետ աշխատելիս: Սա մենք խորապես գիտակցում ենք և ուզում ենք նրանց ճիշտ ուղղորդել: Սա էլ դժվար է, պայքար է:

- Քանիցս լսելով Ձեզ՝ միշտ մտածել եմ, որ Դուք մանկավարժ եք, քանի որ այնպիսի վերաբերմունք ունեք երեխաների հանդեպ, որպիսին միայն փորձառու մանկավարժներն են ունենում: Դուք հավանաբար լավ ուսուցիչներ եք ունեցել:

- Ոչ միայն ունեցել եմ, այլև այդ միջավայրում եմ մեծացել, որովհետև իմ ծնողներից սկսած, որ մանկավարժներ են, ֆրանսիական դպրոցում, որտեղ սովորել եմ, ու նաև մեկօրյա հայկական դպրոցում, ուր հաճախել եմ, այդպիսի մանկավարժներ են եղել: Փոքրուց ես մի այնպիսի աշխարհում եմ մեծացել, որտեղ մեզ թագավորի տեղ էին դնում, որ մենք կարողանանք ինքնուրույն մեր հետաքրքրությունների հետևից գնալ ու աճել: Ես նրանց օրինակով եմ հիմա աշխատում: Ինձ համար դասախոսներից, սեմինարներից բացի մանկավարժության ասպարեզում կարևորը սերն է երեխայի հանդեպ, երբ անկեղծ մտահոգություն կա՝ ինչ անել, որ նա հաջողության հասնի, ու այդ երեխայի մեջ ոչ թե իմ, այլ նրա հաջողությունը տեսնեմ: Ես շատ անմիջական եմ նրանց հետ ու հավատում եմ այդ անմիջականությանը: Չեմ սիրում, ու իրենց էլ ասել եմ, որ ինձ չդիմեն պարոն-ով կամ ընկեր-ով, իմ անունը Կորյուն է, ու մենք շփվելու ենք Կորյուն-Հակոբ, Հակոբ-Կորյուն մակարդակով: Դա, սակայն, չի նշանակում, թե մեկս մյուսին չենք հարգում: Իրականում տարբեր են մեր դիրքերը. դու ուսանող ես, ես՝ ղեկավար, բայց սա չի նշանակում, թե ես քեզանից ավելին գիտեմ: Ինձ միշտ ասել են, որ լավագույն ուսուցիչը նա է, ով կարողանում է երեխայից քաղել ու սովորել: Ինչքանով եմ ես մանկավարժ՝ չգիտեմ, ինչքանով եմ մանկավարժության մեջ խորացել, դա էլ չգիտեմ, բայց կարծում եմ, որ սրանով ենք հենց առաջնորդվում Թումոյում՝ երեխային սիրել, մտահոգվել նրա ապագայով, ինչպես կվարվեիր հարազատ երեխայիդ հետ:

- Արցախի երեխաներն ինչ-որ բանով տարբերվո՞ւմ են՝ լավ և վատ կողմերով:

- Կրթության մեջ լավն ու վատը մի քիչ հարաբերական են: Իհարկե, տարբերվում են. ինքնամփոփ են, դժվարությամբ են իրենց կարծիքը հայտնում: Այդ առումով կարոտ ունեն ազատության և անկախության: Ժամանակ է հարկավոր, որ հասնեն այդ հանգրվանին:

- Բայց լավ կողմեր էլ շատ ունեն. կարգապահ են, կարգ ու կանոնին հետևող, հազվադեպ եմ նրանց նկատողություն անում: Այդ օրինաչափությունը մեզ շատ օգնում է: Ծարավ ունեն նոր գիտելիքի, նոր փորձառության, նոր մարդկանց հետ շփվելու: Միայն համարձակությունն է, որ դեռ ձեռք չեն բերել, բայց մեզ մոտ դրան էլ կհասնեն:

- Այժմ՝ արդյունքների մասին:

- Նախ ասեմ, որ Թումո Ստեփանակերտը սկսեցինք 600 ուսանողով: Այս պահին կրկնապատիկն ունենք՝ 1200: Մեծ մասը գալիս էր Ստեփանակերտից: Այս երկու տարվա մեջ մենք մեծ ձեռքբերումի հասանք Թումոյի աշխարհագրությունն ընդլայնելու առումով, ու ես հպարտ եմ դրանով: Նաև շրջաններից բավականաչափ ուսանողների ներգրավեցինք: Առաջին տարում մենք Արցախի կառավարության հետ պայմանագիր կնքեցինք, և հաջողվեց թումոբուս ասվածը բացել, ու սկսեցինք ավելի մոտիկ գյուղերն ու քաղաքներն ընդգրկել: Առաջին տարում կենտրոնացանք Ստեփանակերտին մոտիկ գյուղերի վրա՝ Շուշիի շրջանն ու Քարին տակ գյուղն ապահովվեցին թումոբուսներով: Գնացինք նաև Ասկերանի շրջանի Շոշ, Իվանյան, Նորագյուղ, Խնապատ համայնքները և Ասկերան քաղաք: Երկրորդ տարում ևս մի շրջան ավելացավ. Մարտունուց՝ Կաղարծի, Պառավաքումբ, Մուշկապատ, Հաղորտի գյուղերն ու Մարտունի քաղաքը, ու մեծ հաջողություններ ունեցանք: Սեպտեմբերից միացավ Հադրութի շրջանը՝ Քյուրաթաղ, Ուխտաձոր, Ակնաղբյուր գյուղերով: Մարտակերտ քաղաքը խանդավառությամբ մեզ միացավ, Քաշաթաղի շրջանից՝ Բերձորը: Այնպես որ, ծրագրերը շատ են, ու բավական լավ բաներ են մեզ սպասում:

Մասնակիցների թվի ավելացումը ստիպեց մեր տարողությունը մեծացնել: Մեր կենտրոնը ամենասկզբում նախատեսված էր 900 հոգու համար՝ համապատասխան համակարգիչներով, տեխնիկայով, սենյակներով և այլն: Այս պահի դրությամբ պատրաստ ենք ընդունել 1300 ուսանողի: Մեզ հաջողվեց նաև երկու ուսումնական հաստատությունների՝ Ստեփանակերտի Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի և Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի հետ համագործակցություն սկսել ու նրանց կրթական ծրագրերի մեջ ընդգրկել Թումոն՝ որպես պարտադիր առարկա: Նրանց բոլոր ուսանողները հաճախում են մեր կենտրոն: Ինչպես Երևանում Վազգեն Սարգսյանի անվան, Խանփերյանցի անվան ռազմաուսումնական հաստատություններն են և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական ուսումնարանը՝ Դիլիջանում, որտեղ Թումոն արդեն կրթական ծրագրի պարտադիր մաս է 1-3-րդ կուրսերի համար:

Մեծ հաջողություն էր նաև Արցախի տարբեր նախարարությունների հետ համագործակցելը: Թումոն վստահելի կառույց դարձավ մշակույթի, կրթության և էկոնոմիկայի նախարարությունների համար, նրանց ֆինանսավորման շնորհիվ կարողացանք իրականացնել նախագծեր: Զբոսաշրջության վարչության հետ, որը հիմա մշակույթի նախարարության մաս է կազմում, Արցախի, Ստեփանակերտի և Շուշիի քարտեզները թարմացրինք՝ զբոսաշրջիկներին տրամադրելու նպատակով, մշակույթի նախարարության հետ Շուշիին նվիրված ցուցահանդես կազմակերպեցինք Մայիսի 9-ի կապակցությամբ և նույնիսկ «Yang Artsakh» կայքը ստեղծեցինք, որը հիմա գործում է, Արցախպրեսի հետ միասին նրանց տարբերանշանը թարմացրինք: Յոթ տարբեր աշխատարաններ ենք կազմակերպել, մասնագետներ բերել ու նախագծեր իրականացրել:

2017-ին մենք նաև նախագծեր իրականացրինք միջազգային մեր ընկերների հետ: Առաջինն ուզում եմ նշել Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա քաղաքի մեկօրյա հայկական «Օհանեսյան» վարժարանի հետ համագործակցությունը. նրանք մեզ առաջին պատվերը տվեցին, այսպես ասած՝ դրսից: Մեր երեխաներն իրենց աշխատարանների միջոցով իրականացրին. դա հայոց պատմության ժամանակագրությունն էր, որ նրանք պատվիրեցին արևմտահայերենով ստեղծել իրենց դպրոցի սաների համար: Այս երևույթը նույնպես շատ եմ կարևորում, որովհետև մտածելակերպ է փոխվում, որ ոչ միայն Սփյուռքն է Արցախին օգնում, այլև Արցախն է ինչ-որ մի բան իրականացնում Սփյուռքի համար: Բացի դրանից, հետաքրքիր է նաև այն, որ Արցախի երեխաներն են իրենց սփյուռքահայ հասակակիցների համար հայոց պատմությունը ավելի մատչելի դարձնում:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ սկսեցինք համագործակցել՝ կապված աշակերտների շրջանում Զապել Եսայանի անվան մրցույթի կազմակերպման հետ: Մեր գործընկերները շատացան քանակով ու բնույթով: Այսպիսով իրականություն ենք դարձնում ի սկզբանե դրված մեր խնդիրը՝ Թումոյով կապվել ոչ միայն արցախյան կամ հայաստանյան իրականության, այլև աշխարհի հետ:

Անցած երկու տարում 20, իսկ երեք տարվա ընթացքում 27 աշխատարան ենք ունեցել: Հիշեցնենք, որ դրանք վարում են արտերկրից հրավիրված մասնագետները: Մենք ունեցել ենք Իտալիայից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Անգլիայից, Սիրիայից, Լիբանանից, Ճապոնիայից, Սերբիայից մասնագետներ: Նաև Հայաստանից են պրոֆեսիոնալներ հրավիրվել: Չմոռանանք նաև մեր մշտական դասընթացավարներին, որոնք չորս շաբաթը մեկ Երևանից ժամանում են այստեղ մեկ ամսով, որոնք կանոնավոր ապահովում են մեր մշտական դասընթացները: Սա իրականում ամենից մեծ գործունեությունն է Թումոյում: Սա նաև նպաստում է ինքնաճանաչողությանը. Երևանն ու Ստեփանակերտն են իրար հետ կապվում, գրական հայերենն է այստեղ ավելի հնչում: Մեր մասնագետները Հայաստանի տարբեր շրջաններից են գալիս. ունենք լոռեցի, շիրակցի, սյունիքցի, նրանք գալիս՝ իրար հետ շփվում ու մոտիկից ծանոթանում են:

Մեր անձնակազմը համալրվեց: Երկու տարվա ընթացքում եռապատկեցինք մեր թվաքանակը: Ինձանից բացի բոլորն այստեղից են: Ինչքան շատ ուսանող, այնքան շատ տեխնիկական հագեցվածություն ու անձնակազմ, որ կարողանանք որակ ապահովել:

Չմոռանանք նշել նաև կարևոր մի նախագիծ՝ կինոուրբաթները: Կարելի է ասել, միակ կենտրոնն ենք Երևանից դուրս, որ այդ կինոուրբաթներն ունենք:

- Ի՞նչ է կինոուրբաթը:

- Ամեն ուրբաթ, առանց բացառության, կազմակերպում ենք կինոդիտումներ: Լավագույն ֆիլմերի շարք ենք ընտրում, լավագույն որակով ցուցադրում, ու դա մաս է մեր 14 մասնագիտություններից ֆիլմերի ստեղծման: Մենք հավատում ենք, որ այդ կինոճանաչողությունը, կինոդիտումը, քննարկումները, այդ աշխուժությունը պետք է Ստեփանակերտ բերենք: Ցավոք, կինոմշակույթը մի քիչ այնպես չէ այստեղ, որ ժողովուրդը շատ գնա ֆիլմեր դիտելու, չնայած իրականում նրանք ֆիլմեր դիտում են: Պարզապես կինո գնալու մշակույթ քիչ կա: Գիտեմ, որ նախկինում կար, դրա համար էլ փորձում ենք դա զարգացնել կինոուրբաթների միջոցով:

- Ձեր մաղթանքը:

- Նախ՝ խաղաղություն, քանի որ դա նախապայմանն է ամեն ինչի: Ինքս էլ անձամբ զգացել եմ, թե ինչքան է դա ազդում, ու որչափ մենք դրա կարիքն ունենք: Թարմ ուժերով, նոր գաղափարներով բոլորս մեր փոքր ներդրումն անենք Արցախին, Թումոյին, մեր եկող սերնդին: Ուզում եմ տեմպը նորից ընդգծել. կարողանանք տեմպը պահել, անգամ ավելի արագացնել: Սերունդ ենք պատրաստում: Ինձ համար մեր, այսպես կոչված, հաճախորդը, մեկնակետը երեխան է, մենք որպե անգամ իրավունք չունենք վատնելու, պետք է ջանք չխնայենք՝ նրան ճիշտ ուղղորդելու և այնպես անենք, որ այդ սերունդը չկորչի:

Հարցազրույցը՝
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՈՒՍԱՆԵԼԻ ԵՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Մեր գործն է՝ սովորել ու սովորել, ձգտել կուտակել հնարավորին չափ շատ գիտելիքներ, որովհետև հասարակական լուրջ հոսանքներն այնտեղ են, որտեղ գիտելիքներն են, և ապագա մարդկության երջանկությունը միայն գիտելիքների մեջ է:

Ա.Պ. Չեխով

Ուսումնական յուրաքանչյուր առարկա կարևոր է և ունի իր առանձնահատկություններն ու նպատակը, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի դրա կարևորությունը և ազգին նվիրի բանիմաց աշակերտներ:

Գուցե այդ է պատճառը, որ վերահաստատված փնջային մեթոդմիավորման անդամները կարևորությունը տալիս են բոլոր առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում վստահվում է ազգին նվիրյալ զավակներ կրթողներին ու դաստիարակողներին:

Դեռ չէինք հասցրել թարմ տպավորությունները հուշերի վերածել, երբ կրկին հավաքվեցինք Մարտակերտի շրջանի Պողոսագոմերի, Դրմբոնի, Կոճողոտի, Չլդրանի, Հարգոմերի, Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցների մի խումբ ուսուցիչներով: Հավաքվել էինք Պողոսագոմերի միջնակարգ դպրոցում՝ ականատես լինելու մեր աշակերտների կարողություններին: Այս անգամ փնջային մեթոդմիավորման անդամները ներկա էին 9-10-րդ և 11-12-րդ համալիր դասարաններում ինֆորմատիկա և 7-րդ դասարանում կենսաբանություն առարկաներից ընդօրինակման դասերին: Երեքն էլ հագեցած էին և ուսանելի, ունեին նպատակ և հետաքրքրություն:

Ժամանակակից ուսումնառության մեջ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ինֆորմատիկայի դասընթացին, հատկապես երբ գյուղն ու դպրոցն ունեն համացանց: Երիտասարդ ուսուցչուհի Աստղիկ Գրիգորյանն իր ողջ եռանդը ներդրել էր աշակերտների մեջ առարկայի նկատմամբ սեր առաջացնելու և համացանցից օգտվելու կարողություն սովորեցնելու մեջ: Դժվար չէր նկատել, թե աշակերտներն ինչ ոգևորությամբ էին նստում համակարգչի դիմաց և կատարում ուսուցչուհու հանձնարարությունները: 12-րդ դասարանի աշակերտները ներկայացրին «Պասկալ» ծրագրավորման լեզվի կիրառումը՝ հանգամանալից բացատրելով թեմայի էությունն ու կարևորությունը:

7-րդ դասարանում կենսաբանության երիտասարդ ուսուցչուհի Գայանե Առստամյանն իր առջև նպատակ էր դրել միաբջիջ կենդանիներին բազմաբջիջ կենդանիներից տարբերակել տալը: Տասներկուամյա աշակերտները հաճույքով էին բնութագրում միաբջիջ կենդանիների՝ հոդաթափիկ ինֆուզորիայի, ամեոբայի, ութոտնուկի և այլ կենդանիների մարմնի

կառուցվածքը, մարսողական համակարգը, այդ կենդանիների՝ բնությանը տված օգտակարությունն ու վնասակարությունը: Չնայած իրական կյանքում չէին տեսել, բայց ծանոթ լինելով կենդանական աշխարհին՝ կարողանում էին պատկերացնել նրանց ձևն ու տեսքը ու ճիշտ ներկայացնել: Աշակերտների համար ավելի մատչելի էր ներկայացնել բազմաբջիջ կենդանիներին, որոնց մասին նախօրոք համացանցից տեղեկություններ էին հավաքել:

Նույն դասարանի աշակերտների իմացության վառ ապացույցը «Քլորոֆիլի դատը» դաս-միջոցառումն էր, որտեղ նրանք կարողացան հաստատել, որ կյանքում մեծ նշանակություն ունի ցանկացած քիմիական տարր, անգամ ածխաթթու գազը, որը շատերի կարծիքով միայն վնաս է առողջությանը: Ներկաները ոգևորված էին, տեսնելով, թե ինչպես է 9-րդ դասարանում սովորող Արման Առստամյանը կարողանում ներկայացնել քիմիական մի քանի փորձ՝ «Փարավոնի օձը», «Հրաբխի ժայթքումը լեռան կատարից», «Ջրից կրակ ստանալ»: Նա խորհուրդ էր տալիս նույնը չկրկնել տնային պայմաններում, քանի որ միշտ չեն քիմիական փորձերն ունենում բարեհաջող ավարտ, հատկապես երբ այն սովորում են համացանցից:

Լ. ՄԻՆԱՍՅԱՆ
Պողոսագոմերի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԲԱԺ ԴԱՍ ՄԱՅՐԵՆԻԻՑ

Շահումյանի շրջանի Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցում հաճախակի են կազմակերպվում ընդօրինակելի բաց դասեր ու միջոցառումներ: Վերջերս ներկա եղա 3-րդ դասարանում մայրենի առարկայից դասվար Աննա Աբրահամյանի կազմակերպած բաց դասին: Դասը առակագրության մասին էր՝ անչափ հետաքրքիր թեմա աշակերտների և դասալսողների համար: Նախ նշեմ, որ ուսուցչուհին բավականին աչալրջորեն էր պատրաստվել դասին՝ ապահովելով ԽԻԿ համակարգի պահանջները: Դասարանը կահավորել էր դասանյութին համապատասխան դիդակտիկ նյութերով՝ պաստառ, առակների գրքեր, նկարներ, համակարգիչ:

Դասն սկսվեց նախորդ նյութի՝ «Թագավորը, նազիրը և վեզիրը» առակի վերաբերյալ հարցադրումներով, որոնց համապատասխան աշակերտները ներկայացրին, թե ինչպես է ծնվել առակը և ինչ է այն ուսուցանում, որտեղ է ամփոփված լինում առակի հիմնական միտքը, ով է Եզոպոսը, ուրիշ ինչ առակագիրներ են իրենց հայտնի: Այնուհետև դիտեցին առակի վերաբերյալ տեսասահիկ: Աշակերտները բեմականացրին «Թագավորը, նազիրը և վեզիրը» առակը՝ հերոսներ դարձնելով առյուծին, գայլին ու աղվեսին:

Նախորդ թեման ավարտելուց հետո պրիզմա մեթոդով «ծով» բառը կապեցին «գետ» բառին, այնուհետև ուսուցչուհու կողմից հնչեցին հերթական հարցերը՝ ուր են լցվում գետերը, հնարավո՞ր է, որ որևէ մեկն ընդունակ լինի խմել ծովի ամբողջ ջուրը: Մինչ աշակերտները հարցերի շուրջ կմտածեին, ուսուցչուհու հրահանգով խառնագրի միջոցով բացահայտեցին «հնարամիտ» բառը, որն էլ խթան հանդիսացավ հնչած հարցի պատասխանի համար: Հետո անցան նոր թեմային՝ Եզոպոսի «Հնարամիտը» առակին:

Խառը հերթականությամբ աշակերտներին բաժանվեց տեքստը: Ընթերցելուց հետո նրանց հաջողվեց այն ճիշտ դասավորել և ստանալ առակը: Այս ամենից հետո կատարվեցին լեզվական աշխատանքներ տեքստի շրջանակում:

Կշռադատման փուլում խորանարդիկը որպես զառ օգտագործելով՝ ուսուցչուհին ամրապնդեց նոր թեման, որը հանձնարարվեց ընթերցել, իսկ «հնարամիտ» բառից քամել նոր բառեր ու դրանցով կազմել բարդ և ածանցավոր բառեր:

Նմանատիպ բաց դասերն, անշուշտ, նպաստում են մայրենի լեզվի զարգացմանը և աշակերտների ինքնուրույն կարծիք ձևավորելուն:

Լուսինե ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջն. դպրոցի դասվար

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՃՈՒՄ ԵՆ ՎԱՂՎԱ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԸ

Արցախյան շարժման 30-ամյակին ընդառաջ՝ հանրապետության ուսումնական հաստատություններում անցկացվում են տոնական միջոցառումներ: Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցում մեկնարկը տվեցին ամենափոքրերը՝ նախադպրոցական խմբի երեխաները: Այստեղ գործում են վեց այդպիսի խմբեր, որոնցից «Ժպիտ»-ը առաջինը ներկայացրեց իր ծրագիրը:

Դահլիճում տիրում էր ազգային, հայրենասիրական ոգին: Երեխաները՝ հագնված ազգային տարազի ոճով, բեմը՝ կահավորված հայկական կենցաղի նմուշներով, ոգեղեն երաժշտությունը, երեխաների համարձակ ելույթները բարձր տրամադրություն էին առաջացրել բոլորի մոտ: Չկար հաղորդավար, չկար ներկայացնող. փոքրիկներն իրենք, լավ տիրապետած կոմպոզիցիայի ընթացքին, իրար ետևից արագ ու սահուն անցում էին կատարում մեկ համարից մյուսը՝ արտասանելով խելացի մտքեր հայրենիքի, հերոսների մասին՝ խոստանալով հարկ եղած դեպքում կռվել Բեկորի, Մոնթեի, Աբաջյանի, մեր մյուս հերոսների նման, լինել հայրենիքի նվիրյալ: Երգեցին «Տալվորիկ», «Լեբլեբիջիների երգը» («Մենք քաջ տոհմի զավակներն ենք»), պարեցին «Յարխուշտա», աղջիկները՝ «Նազանի», իսկ «Քոչարին»՝ ծնողների հետ: Ներկայացրին արցախյան բարբառով տեսարան: Այդպես արտահայտեցին այն ձեռքբերումը, նաև ինչի համար 30 տարի առաջ իրենց պապերը դուրս եկան հրապարակ, անցան պարտադրված պատերազմի միջով: Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի (Բեկոր) Անի գեղեցկուհի թոռն ու նրա ընկերները՝ ամեն մեկը մի խիզախ արցախցու թոռ, արտահայտեցին իրենց հպարտությունը, որ մեծանում են պապերի պաշտպանած հողում և կդառնան նրանց գործի շարունակողները:

Ցուցադրվեց տեսահոլովակ այն մասին, թե ինչպես էին երեխաները հյուրընկալվել Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցի տարածքում՝ կրթօջախի զինղեկ Արման Ավանեսյանի նախաձեռնությամբ ստեղծված պայմանական զորամասում, որտեղ ամեն ինչ այնպես է, ինչպես առաջնագծում: Երեխաները մասնակցեցին «ռազմական գործողությունների»:

Միջոցառմանը ներկա էին ԱԺ պատգամավորներ, զինվորականներ, ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր:

Հ. 1 դպրոցի նախկին տնօրեն, ԱԺ պատգամավոր Ռոմելա Դադայանը դրվատեց կրթօջախի դաստիարակների միասնական, նվիրված աշխատանքը: Նրանք հասցնում են ոչ միայն ծրագրային նյութը տալ երեխաներին, այլև նրանց գեղագիտական դաստիարակության վրա աշխատել, ճաշակ ձևավորել, ապրելակերպ դաստիարակել: «Համոզված ենք, ասվածի 10 տոկոսը կմնա երեխայի հոգում: Իսկ դա շատ մեծ նվաճում է 4-5 ամսվա համար»,- ասաց նա:

Պատգամավոր Արզիկ Մխիթարյանը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, թե գերազանց կրթություն ստացած մանկավարժը, որպիսին տվյալ դեպքում իր նախկին ուսանողուհի, դաստիարակ Զոյա Ավագիմյանն է, ինչպես է տալիս գերազանց արդյունք:

Իսկ ԿԳՍՆ նախադպրոցական և արտադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը ԱԺ պատգամավորների ուշադրությունը հրավիրեց դպրոցի մի խնդրի վրա՝ 200 նախադպրոցական աշակերտ ունեցող կրթօջախը չունի պարուսույց՝ համապատասխան հաստիքի բացակայության պատճառով: Դպրոցում աճում են վաղվա մեր հայրենասեր զինվորները, ուրեմն՝ 30 տարի առաջ սկսված ազգային մեծ զարթոնքը չի մարի:

Սեփ. լրատվություն

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թ. N 30-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018 -2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
2017 թվականի դեկտեմբերի 25-ի
N 30-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մաս նագիտական մանկավարժություն**				
	✹ 011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.02.6 Քիմիա	Քգ) կամ Կ (գ)	Կ (գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
031201.00.6	**Քաղաքագիտություն**				
	031201.01.6 Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
031301.00.6	**Հոգեբանություն**				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ (գ)	Կ(գ)**	
032101.00.6	**Լրագրություն**				
	032101.01.6 Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041201.00.6	**Ֆինանսներ**				
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում(ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
101501.00.6	**Զբոսաշրջություն**				
	101501.01.6 Զբոսաշրջություն	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Օտլ (գ)**		Հլգ(գ)*

✹ - *Նշված մասնագիտություններով ԱրՊՀ առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:*

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)	
053101.00.6	**Քիմիա**				
	053101.02.6 Դեղագործական քիմիա	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2.«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041 801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071403 .00.6	**Ռադիոտեխնիկա և կապ**				
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

071 602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	✹ 071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	✹ 072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Ք(գ)	Ֆ(գ)** կամ Ք(գ)** կամ Մ(գ)**		
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ	Մ(գ) **	Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
084101.00.6	**Անասնաբուժություն**				
	✹ 084101.01.6 Անասնաբուժություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*

1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041 801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	✹ 071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

✹ - Նշված մասնագիտություններով վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, որպես մրցութային առարկաների գնահատական, դիմորդը կարող է դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական կրթությամբ)
2916	Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)
3104	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ***	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մաս նագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ***	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0207	Թարգմանություն և գործավարություն (հիմնական կրթությամբ)
0302	Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0303	Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)
0416	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0602	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0603	Ֆինանսներ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2203	Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
2307	Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ**		
011401.00. 6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտո ւթյուն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնա գիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
021201.00.6	**Դիզայն**				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	բանավոր	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
(գ)	գրավոր	Մ	Մաթեմատիկա
Ա	Աշխարհագրություն	Մասն.	Մասնագիտական
Անգլ	Անգլերեն	ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Գծ	Գծագրություն		
Գծն	Գծանկար	Նկ	Նկարչություն
Գն	Գունանկար	Ռլ	Ռուսաց լեզու
ԸՊ	Ընդհանուր պատմություն	ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Ք	Քիմիա
		Օտլ	Օտար լեզու****
Կ	Կենսաբանություն	Ֆ	Ֆիզիկա
Կոմպ	Կոմպոզիցիա		
ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն		

Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

**Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:*

***Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:*

****Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:*

*****Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):*

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թ. N 31-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Արցախի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի դեկտեմբերի 25-ի
N 31-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0402	Մանկաբարձական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0405	Դեղագործություն (միջնակարգ կրթությամբ)
0406	Քույրական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0418	Բուժական գործ զինված ուժերում (հիմնական կրթությամբ)

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0501	Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0502	Երգեցողություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0503	Երգչախմբավարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0504	Երաժշտության տեսություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0505	Էստրադային երաժշտարվեստ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔՈԼԵՋ

Դասիչը	Մասնագիտությունը
0514	Դիզայն ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ)
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում (հիմնական կրթությամբ)

3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը
2302	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում (միջնակարգ կրթությամբ)

4.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0319	Պարի ուսուցում (միջնակարգ կրթությամբ)
0506	Դասական պար (4-րդ դասարանն ավարտած)
	Ժողովրդական պար (8-րդ դասարանն ավարտած)

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում (հիմնական կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում (հիմնական կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
2203	Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (հիմնական կրթությամբ)

7. ՇՈՒՇԻԻ «ԵԶՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում (հիմնական կրթությամբ)
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (հիմնական կրթությամբ)
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա (հիմնական կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական կրթությամբ)
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայոց բանակի կազմավորման 26-ամյակի կապակցությամբ և ի նշանավորումն Արցախյան շարժման 30-ամյակի՝ ԱՀ «Մայրություն» ՀԿ նախաձեռնությամբ հունվարի 28-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում անցկացվեց «Հայրենիքը սկսվում է սահմանից» թեմայով ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես, որի մասնակիցները ՊԲ զինծառայողների ընտանիքներն էին: Մրցույթի առաջին փուլն անցկացվել է հանրապետության շրջկենտրոններում, ռազմական ստորաբաժանումների տեղակայման վայրերում 2017թ. դեկտեմբերի 25-31-ն ընկած ժամանակահատվածում:

Նախագծի հեղինակ և ցուցահանդեսի համակարգող,«Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանի խոսքով՝ ԱՀ պաշտպանության բանակի զինծառայողների ընտանիքների միջև անցկացվող ստեղծագործական մրցույթի նպատակն է նպաստել բնակչության շրջանում հայկական մշակութային ժառանգության քարոզչությանն ու զարգացմանը, բացահայտել զինծառայողների ընտանիքների կարողությունները, խթանել տաղանդավոր պատանիների ու երիտասարդների ընդունակությունների զարգացումը, կազմակերպել ԱՀ ՊԲ զինծառայողների ակտիվ հանգիստը, բարձրացնել նմանատիպ ընտանիքների հասարակական կարևորությունը:

«Հայրենիքն սկսվում է ոչ միայն սահմանից, այլև այդ սահմաններն ամուր ու անառիկ պահող զինվորի ու սպայի ընտանիքից: Այն տաղանդավոր պատանիներից, ովքեր այսօր ստեղծագործում են, այսպես ենք օգնում մեր զինվորներին, սատարում նրանց, որ առավել աչալուրջ լինեն ու բազմապատկված եռանդով պահեն ու պահպանեն մեր հայրենիքն ու ապահովեն ժողովրդի խաղաղ, ստեղծագործ կյանքը»,- ասաց Հ. Միքայելյանն ու շնորհավորեց ներկաներին Բանակի օրվա առթիվ:

Մրցութային հանձնախմբի նախագահ, «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Յուրի Հովհաննիսյանի գնահատմամբ՝ մրցույթը կայացել է: Կայացել է առաջին հերթին հայ սպայի, զինծառայողի շնորհիվ, որին երբեք չի լքում ստեղծագործ ոգին: Այն, որ նա կարողանում է և՛ սահման պահել, և՛ իսկ վաղը սահման են պահելու: Մենք էլ ստեղծագործել՝ խոսում է մեր ժողովրդի աստվածատուր շնորհի և ներուժի մասին:

Մրցույթն արժևորեցին ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Վրեժ Իշխանյանը, ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության փոխնախարար Գայանե Գրիգորյանը: Ըստ փոխնախարարի՝ բանակ ասելով՝ հասկանում ենք ոչ միայն զինվորականներին, այլև նրանց ընտանիքներին: Ընտանիք, որտեղ ծնվում ու դաստիարակվում է ապագա հայրենյաց պաշտպանը: Անգնահատելի է ընտանիքի դերը հայրենիքի պաշտպանության գործում: Այդ ընտանիքների շնորհիվ է, որ կարողանում ենք պահպանել մեր ազգային արժեքներն ու ավանդույթները և փոխանցել սերունդներին:

Մրցույթի լավագույն աշխատանքների հեղինակներ պարգևատրվեցին մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից:

Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ

ՄԱՐԴԻ՛Կ, ՔԱՆԻ ԲԱԲԱԽՈՒՄ Է ՁԵՐ ՍԻՐՏԸ, ՀԻՇԵՑԷ՛Ք ՆՐԱՆՑ...

«Մենք ենթակա ենք գոյության կռվի հավերժական օրենքին և ըստ այդմ մշտապես պիտի պայքարենք մեր ապրելու իրավունքի համար»: Նժդեհյան այս վեհ գաղափարախոսությամբ էլ Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ զոհված ազատամարտիկներին նվիրված հուշ-ցերեկույթ: Քերթ գյուղը Արցախյան պատերազմի տարիներին տասնվեց զոհ է տվել, և դպրոցի տնօրինությունը որոշել է մեծարման միջոցառումներն անցկացնել երկու հերթափոխով՝ օգոստոսից մինչև դեկտեմբեր և հունվարից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում ծնված հերոս տղաների հիշատակին:

Միջոցառմանը ներկա էին զոհված ազատամարտիկների ծնողները, ընտանիքի անդամները, հարազատներ, գյուղի բնակիչներ: Լուռ էր դահլիճը, քար լռություն էր հանդիսականների հոգում: Երբ հնչեց Արցախի Հանրապետության հիմնը, բոլորիս վրեժխնդրության զգացումն էր համակել: Լռության միջից «դղրդում էին» զոհվածների հանդիմանական հայացքները: Նրանք են՝ Սաշիկ Հայրապետյան, Ալյոշա Աղաբեկյան, Մանվել Պետրոսյան, Ալիկ Սայիյան, Վովիկ Փաշայան, Վլադիկ Բաղրյան, Ալիկ Գրիգորյան: Փա՛ռք ու պատիվ նրանց: Ներկաները հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգեցին նրանց հիշատակը: Այնուհետև բացման խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Էլմիրա Համբարձումյանը.

- Այսօրվա հուշ-ցերեկույթը մեր սիրո և հարգանքի դրսևորումն է նահատակված մեր հայրենակիցների անմար հիշատակին: Մարդկության դարավոր պատմությունը վկայում է, որ չի կարող մեռնել այն ազգը, որը պայքարում է հանուն գոյատևման, հանուն արդարության: Աշակերտները համառոտ ներկայացրին քաջորդիների կենսագրությունը:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ ՌՈՒԲԻԿԻ



Ծնվել է 1973թ. օգոստոսի 1-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Գերազանց գնահատականներով ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և ուսումը շարունակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժնում: Կրակը սրտում այդ երիտասարդը 1991թ. անդամագրվել է Մաճկալաշենի գումարտակին: Մասնակցել է Ամարասի, Խազազասարի, Մարտակերտի, Հորադիզի և այլ ռազմագործողությունների:

Զոհվել է 1993թ. դեկտեմբերի 31-ին Ֆիզուլիի տարածքում: Ամուսնացած չէր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՍՄԲԱՏԻ



Ծնվել է 1962թ. հոկտեմբերի 1-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է գյուղի կոլտնտեսությունում: Արցախյան ազատագրական պայքարի տարիներին մասնակցել է Ամարասի ձորակի պաշտպանությանը՝ Մարտունու պաշտպանական շրջանի Մաճկալաշենի թիվ 22 գումարտակի կազմում:

Զոհվել է 1993թ. ապրիլի 16-ին Ամարասում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով: Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

ՓԱՇԱՅԱՆ ՎՈՎԻԿ ՇԱՀԵՆԻ



Ծնվել է 1954թ. դեկտեմբերի 5-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ստացել է միջնակարգ կրթություն: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է Մարտունու շրջանի կենցաղսպասարկման կոմբինատում՝ որպես դերձակ: 1991թ. կամավորագրվել է Մաճկալաշենի թիվ 22 գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակում: Եղել է դասակի հրամանատարը: Մասնակցել է Ամարասի ձորակի և Մարտունու շրջանի մի շարք բնակավայրերի պաշտպանական մարտերին:

Զոհվել է 1994թ. հունվարի 28-ին Ֆիզուլիի շրջանում: Ամուսնացած էր, ունի չորս երեխա:

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱԼՅՈՇԱ ԱՇՈՏԻ



Ծնվել է 1950թ. հոկտեմբերի 10-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ապա տրակտորիստի մասնագիտություն ձեռք բերել Մարտունու թիվ 125 պրոֆտեխուսումնարանում: 1970-72թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է կոլտնտեսությունում՝ որպես տրակտորիստ: Մասնակցել է Ամարասի ձորակի պաշտպանությանը:

Զոհվել է 1993թ. դեկտեմբերի 29-ին Ամարասում: Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

ՍԱՅԻՅԱՆ ԱԼԻԿ ՄԱՌԼԵՍԻ



Ծնվել է 1973թ. սեպտեմբերի 2-ին Բաքու քաղաքում: Կրթություն է ստացել տեղի ռուսական դպրոցներից մեկում: 1989թ. ընտանիքով բռնագաղթել է Մարտունի քաղաք, ներգրավվել Արցախյան պատերազմին: Մասնակցել է Մարտունու ինքնապաշտպանական ու շրջակա բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին:

Զոհվել է 1992թ. սեպտեմբերի 11-ին Մաճկալաշենի պաշտպանության մարտում: Ամուսնացած չէր:

ԲԱՂՐՅԱՆ ՎԼԱԴԻԿ ՂԱՀՐԱՄԱՆԻ



Ծնվել է 1956թ. դեկտեմբերի 1-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ստացել է միջնակարգ կրթություն: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ապրել է Երևանում: Վերադարձել և մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին՝ Մարտունու և Մարտակերտի շրջանների պաշտպանական մարտերին:

Զոհվել է 1994թ. փետրվարի 4-ին, Մարտակերտի շրջանում: Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԻԿ ՀՐԱՆՏԻ



Ծնվել է 1955թ. դեկտեմբերի 1-ին Մարտունու շրջանի Քերթ գյուղում: Ավարտել է գյուղի 8-ամյա դպրոցը: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է գյուղի կոլտնտեսությունում: Մասնակցել է Ամարասի ձորակի պաշտպանության և Մարտունու շրջանի մի շարք բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին:

Զոհվել է 1994թ. ապրիլի 26-ին, Ներքին Վեյսալու գյուղի ազատագրության համար մղված մարտում: Ամուսնացած էր, ունի չորս երեխա: Հանգչում է Քերթի գերեզմանատանը:

Դպրոցականներն անզուգական ասմունքով և հայրենասիրական երգերով իրենց հարգանքի խոնարհումը բերեցին նահատակների ծնողներին և ուխտեցին, որ այսօր առավել քան երբևէ, կպահպանեն հայրենի հողը և մեր չքնաղ մայրենին:

Միջոցառման վերջում դպրոցի տնօրեն Ժ.Հայրապետյանը իր խորին շնորհակալությունը հայտնեց ծնողներին, հարազատներին՝ ասելով, որ քանի իրենք ողջ են, հիշելու և մեծարելու են բոլոր ժամանակներում զոհվածներին, քանզի յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ իրենից է սկսվում հայրենիքը:

Միջոցառումը եզրափակեց դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ Ստելլա Ղուլյանը հեղինակային հետևյալ տողերով.

Իմ կարոտը իմ որդին է,
Նա չի դարձել ռազմի դաշտից,
Իմ կարոտը անուն ունի,
Վիշտ է ու ցավ անդառնալի,
Իմ կարոտը...
Իմ կարոտը իմ հայրիկն է՝
Անմահացած ռազմի դաշտում,
Երբ հիշում եմ, սիրտս է մրսում...
Իմ կարոտը աղոթք է լուռ,
Դեպի երկինք պարզած ձեռքեր,
Իմ կարոտը,
Իմ կարոտը էլ չի մարում...

Սա մի յուրօրինակ արիության դաս էր, աշակերտների հայրենասիրական ոգու, բարոյական արժեքների դաստիարակման դաս և հավաստումն առ այն, որ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ
Քերթի Կ. Հակոբյանի անվան միջն. դպրոցի նախապատրաստական խմբի դաստիարակ

ՄԱՏԱՂԻՍԻ ԱՐԾԻՎԸ

1979 թվականի հունվարի 1-ը Մանուկյանների ընտանիքում կրկնակի տոն էր, քանի որ լույս աշխարհ էր եկել նրանց որդին՝ Գեղամը: Մարտակերտում իր կյանքի արշալույսը կնքած փոքրիկը, դաստիարակվելով հայրենասիրական ոգով ու տրվելով ժամանակի հրամայականին, հլու զինվորագրվեց իր հայրենին պաշտպանելու սուրբ ու նվիրյալ գործին: Դեռ դպրոցական նստարանից թեպետ չարաճճի, բայց բոլորի հարգանքը վայելող տղան Արցախյան շարժման առաջին իսկ օրերից հետաքրքրված էր իր հողի ճակատագրով:

Մի անգամ 13-ամյա Գեղամը, դիմելով հորը, ասաց. «Հայրի՛կ, դու է՛լ գնա մասնակցիր որ չամաչեմ, գլուխս բարձր պահեմ»: Հայրը, իհարկե, կատարեց որդու ցանկությունը և Պաշտպանության բանակից զորացրվեց միայն 2001 թվականին:

1996թ. Գեղամը զորակոչվում է Արցախի պաշտպանության բանակ և ծառայության անցնում Հայկազովի զորամասում: Հետագայում սովորում է գեներալ Իվանյանի անվան ռազմական վարժարանում՝ ստանալով լեյտենանտի կոչում:

2000թ., որպես ավագ լեյտենանտ, հետագայում՝ 2013թ. հոկտեմբերի 23-ին՝ արդեն փոխգնդապետ, Մանուկյանը, նշանակվելով զորամասի ինժեներատեխնիկական ծառայության պետ, ծառայում է մինչև 2017թ. փետրվարի 8-ը: Ով իմանար, որ Գեղամը դառնալու է իր հողի անմնացորդ նվիրյալը և անմահանալու է իրեն ճանաչողների սրտերում՝ հավերժանալով նրանց շուրթերին:

2017թ. չարաբաստիկ փետրվարյան միջօրեն իր մահաբույր դրոշմով մարտադաշտում հավերժացրեց ԱՀ պաշտպանության բանակի փոխգնդապետ Գեղամ Հենրիկի Մանուկյանի անունը:

Կենսուրախ, կյանքով լեցուն, պետականամետ մտածողությամբ երիտասարդը հազար երազանք ու փափագ ուներ իր անհանգիստ սրտում: Երկու երեխայի հայր էր: Նա հեռացավ կյանքից՝ անգամ հրաժեշտ չտալով հարազատներին:

Շահումյանի շրջանի Եղեգնուտի Պ.Ղևոնդյանի անվան 2-րդ դասարանի սաները ամեն առավոտ դասարան մտնելով ողջունում են քեզ՝ լուսանկարիդ նայելով: Ճիշտ է, անձամբ չէին ճանաչում քեզ, հերո՛ս, բայց քո արիական կերպարը նրանց մեջ է սաղմնավորվում: Հավատացած եղիր՝ հաջորդ սերունդները շարունակելու են քո կիսատ թողած առաքելությունը:

Մարիամ ՓԻԼԱՖՅԱՆ

ԿԱՆԹԵՂ

ՆՐԱ ՔԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ ԽՏԱՑՎԱԾ ԷՐ ԻՐ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ



Հունվարի 21-ին կյանքից հեռացավ Արցախ աշխարհի մեծավաստակ ու տաղանդաշատ զավակներից մեկը՝ ժողովրդական վարպետ Մելիք Վարդանյանը: Իր անվանը հարիր ազնվական էությամբ անհատականություն էր. քանզի Սոս Սարգսյանի խոսքով՝ «ազնվականություն՝ աշխատասիրություն կնշանակի»: Այս անծայրածիր երկնքի տակ, հողագնդի մի որոշակի կետում մեզանից յուրաքանչյուրն ունի իր սրբազան անկյունը, իր մի կտոր հողը, որտեղ նա ծնվել է. վարպետ Մելիքի համար այդ անկյունն ու հողակտորը Հադրութի շրջանի Ջրակուս գյուղն է, որտեղ 1931 թվականի հունվարի 24-ին լույս աշխարհ է եկել նա:

Մասնագիտությամբ ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ էր: 37 տարի աշխատել է ծննդավայրի դպրոցում, վերջին 17 տարին՝ որպես տնօրեն: Մանկավարժի երկարատև գործունեության համար պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով, իսկ ծննդյան 85-ամյակի առթիվ, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, տարածման ու զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար փայտագործ վարպետին շնորհվել է ԼՂՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում: Ինքը՝ վարպետը, փիլիսոփայորեն էր նայում պարգևներին ու կոչումներին՝ համարելով, որ թերագնահատվելը ցավ է, գերագնահատվելը՝ դժբախտություն: Գոհ էր, որ իր վաստակն արժանացել է իշխանությունների ուշադրությանն ու գնահատանքին, և սիրում էր կրկնել Բեռնարդ Շոուի խոսքերը, թե արվեստագետին կենդանության ժամանակ չմեծարել՝ երկյուղելով որ դա ինքնահավան կդարձնի նրան, նույնն է, թե պարտատիրոջը պարտքը չվերադարձնես՝ մտածելով որ քոռուփուչ կանի:

Բազմաշնորհ մարդ էր. զինագործի, փայտագործի, քանդակագործի, հմուտ մանկավարժի ունակությունները հրաշալիորեն համադրվում էին մի մարդու մեջ, ում արվեստով հիացել են ժամանակակիցները, և ում գործերը, թեպետ իր մանկության ժամանակների կնիքն են կրում, դեռ երկար կապրեն: Վարպետի համոզմամբ՝ բոլոր մարդիկ տաղանդավոր են, պարզապես համբերություն է պետք սեփական ներաշխարհը պեղելու և այնտեղ ամբարված գեղեցկությունը վերհանելու համար: Նրա հոգում ապրող գեղեցկությունը վարպետի պրպտուն մտքի ու ճարտար մատների ներքո մարմին է առել, դարձել մանկություն տանող արահետ ու ապրած օրերի արձագանք, անցյալի քաղցր հուշ ու ազգի ինքնապատկեր: «Խնոցի», «Սանդերք», «Ճախարակով կին», «Օրորոց», «Բրուտագործ» և այլ գործերում ապրում ու շնչում է օրերի միգում մոլորված մի աշխարհ, որին մոռացության մշուշն է սպառնում: Սիրուց ծնված գործեր են դրանք՝ սեր՝ հարազատ միջավայրի ու գյուղական կենցաղի, հողվորի թև ու թիկունք եզան, շեն օջախից անպակաս օրորոցի ու խնոցու, շրջապատի մարդկանց հանդեպ: Եվ պատահական չէ, որ ցուցահանդեսների ժամանակ այցելուները երկար-երկար էին կանգնում դրանց առաջ, իսկ ոմանց աչքերը նույնիսկ արցունքից մշուշվում էին, ասես, հրաշագործ վարպետը նրանց տեղափոխել էր ժամանակի բավիղներում կորած իրենց ծաղկաբույր մանկությունը, նրա սարքած տիկնիկները տատ ու պապի մասին անմոռաց վերհուշեր էին արթնացնում:

13 տարեկանից զբաղվում էր զինագործությամբ. որսորդական հրացանների փայտյա մասերն էր սարքում, իսկ Արցախյան գոյապայքարի տարիներին և՛ զենքը ձեռքին գյուղի պաշտպանների կողքին էր, և՛ զենքեր էր սարքում ու նորոգում: Զինագործի նրա համբավը տարածված էր ոչ միայն յուրայինների շրջանում, այլև մոտակա ու հեռու ադրբեջանական բնակավայրերում: Ուստի, շարժման ժամանակ, որպես զինագործ, առաջին ձերբակալվածների թվում էր: Չէր սիրում անդրադառնալ անմարդկային այն պայմաններին ու դաժանություններին, որ ստիպված էր կրել գերության մեջ, միայն շեշտում էր, որ այդ օրերի մղձավանջից փրկվել է՝ ընթերցելով ու վերընթերցելով ցուցահանդեսների տպավորությունների տետրը, որում ամփոփված գնահատանքի ու մեծարանքի խոսքերն ուժ են տվել դիմանալու այն բոլոր տանջանքներին, որ կրել է թշնամու մեկուսարանում:

Փայտարվեստով լրջորեն սկսել է զբաղվել 1965 թվականից: Մինչ այդ էլ զանազան քանդակներ, ձեռքի գործեր էր նվիրում աշակերտներին, իսկ մի անգամ, երբ երեխաներին փորձում էր բացատրել, թե ինչ է աշխատանքի արտադրողականության բարձրացումը և օրինակ բերեց, որ նախկինում վարուցանքը արորով էին անում, իսկ հիմա՝ տրակտորով, պարզվեց, որ երեխաները չգիտեն՝ ինչ է արորը: Ավելի տպավորիչ դարձնելու համար ուսուցիչն անգամ գրատախտակին նկարեց ասածը, բայց դա էլ չգոհացրեց նրան և որոշեց այդ ամենը քանդակել՝ առավել կենդանի ու շոշափելի դարձնելով դրանք: Այդպես ծնունդ առան տասնյակ կոմպոզիցիոն աշխատանքներ, որոնցում ինքնուս փայտագործն իր ձեռքերով ոչ միայն արձանիկներն էր սարքում, այլև «հագցնում էր»՝ արցախյան տարազի մոռացվող զարդանախշերն ու գույներն ագուցելով դրանց:

Վարպետ Մելիքն իր ապրած ժամանակը խտացրել է իր քանդակներում. 88-ի երկրաշարժը, Արցախյան պատերազմը յուրովի է արտահայտել իր աշխատանքներում: Հատկանշական է 2002-ին ստեղծած «Գաղթի ճանապարհին» թեմատիկ գործը, որը գետաշենցի փախստականների մասին պատերազմական տարեգրության մի վավերագիր է՝ ծեր մորը շալակած որդին է՝ գաղթի ճամփան բռնած:

Եվս մի ուշագրավ փաստ վարպետի ստեղծագործական կյանքից. 1977թ. Մոսկվայում անցկացված «Հայրենիքի ինքնուս վարպետները» փառատոնում Մելիք Վարդանյանի չորս գործերն արժանացել են ոսկե մեդալի և առաջին կարգի դիպլոմի: Հավելենք, որ այդ գործերը մի կարևոր յուրահատկություն էլ ունեն՝ էլեկտրական հոսանքին միացնելիս «աշխատում են», ինչի համար վարպետը պարգևատրվել է նաև ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի ոսկե մեդալով և առաջին կարգի դիպլոմով: Բազմիցս մասնակցել է խմբային ցուցահանդեսների, անհատական ցուցահանդեսով ներկայացել է Երևանում, Բաքվում և Ստեփանակերտում:

Բնությունից օժտված վառ անհատականություն էր Մելիք Վարդանյանը, ում համար ամեն օր նոր բան սովորելու և ինքնակատարելագործվելու պահանջը շնչելու պահանջի չափ բնական անհրաժեշտություն էր: Նրա թողած ժառանգության մաս են կազմում ձեռագիր տետրերը, որոնք ծնվել են գրչի հետ նրա մտերմությունից: Իր ապրած օրերի զգացմունքներն ու խոհերը նա պահ է տվել թղթին, փորձում էր հանգ ու ռիթմ տալ իր մտքերին՝ չափածո խոսքում խտացնելով իր դավանած բարոյական արժեքները: Կյանքի մասին խոհափիլիսոփայական ու երգիծական բազմաթիվ քառյակներ ու բանաստեղծություններ ունի, չափածո ծայագրեր, որոնք ամփոփված են ձեռագիր տետրերում:

Մանկուց տարագիր նախնիների պատմությունները սնել են նրա հոգին ու երևակայությունը Արևելքի շքեղ պատկերներով: Պարսից շահ Աբասը, շրջելով իր հպատակության տակ գտնող հայոց աշխարհում, Պարսկաստան էր տեղափոխում շնորհաշատ ու ոսկեձեռ վարպետների, որոնց բնակեցնում էր Նախիջևանից տեղահանած ու իր երկրում հիմնադրած Նոր Ջուղայում: Վարպետ Մելիքի նախնիները նույնպես ստիպված էին լքել իրենց բնօրրան Ղարաբաղը և հանգրվանել Նոր Ջուղայում: Նա հպարտությամբ էր պատմում, որ տոհմում ճարտար ձեռքերի պակաս երբեք չի եղել, որ պապն էլ (իրենք բաբա էին ասում) արոր էր սարքում, փայտից օրորոց, դդալներ, շերեփ և գյուղական կենցաղում օգտագործվող այլ իրեր: 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո կազմակերպված ընդհանուր գաղթի ժամանակ նրանց գերդաստանը վերադարձել և հաստատվել է հայրենի հողում: Պարսկական հողում նրանց վերջին հանգրվանը եղել է Ղարադաղը, ինքը Հադրութ վերադարձած նախնիների չորրորդ սերունդն էր, բայց հոգու անտես թելերով ասես կապված է մնացել նախնիների երբեմնի բնակավայրին և միշտ երազել է գեթ մի անգամ լինել այնտեղ: Նա նույնիսկ ինքնուրույն սովորել է պարսկերեն, բնագրով կարդացել Խայամին ու Հաֆեզին, թարգմանություններ արել: Նրանց նման էլ, կյանքով իմաստնացած, փորձել է սեղմ ու հակիրճ ձևակերպել ասելիքը («Ներողամտությունը ոչ թե հիմարություն է, այլ՝ կամքի ուժ ու մեծահոգության արտահայտություն», «Փայտի, քարի մեջ կյանք տեսա, հանդիպեցի մարդկանց, որոնց մեջ քար էլ չտեսա», «Եթե արվեստը չի ծառայում ժողովրդին, մեռած է»): Երկար տարիների կենսափորձով հարստացած վարպետը կյանքում ամենից շատ գնահատում էր հոգու մաքրությունը, աշխատասիրությունը, բարությունն ու սերը միմյանց հանդեպ: Պարսիկ դասականների պոեզիայով ու փիլիսոփայությամբ իմաստնացած լայնախոհ մտավորականի հոգին աշխարհն էր ընդգրկում, ապրել է Բաքվում ու Երևանում,բայց միշտ էլ վերադարձել է հայրենի գյուղ: Ջրակուսը երկրագնդի այն միակ վայրը մնաց, որից դուրս կյանքն անիմաստ էր, ու երջանկություն չփնտրեց: Թող հիշատակդ պայծառ մնա, վարպետ , ու հայրենի հողը թեթև լինի վրադ:

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

ԵՍ ԱՆՑՅԱԼԻՑ ԵՄ ԳԱԼԻՍ....

Անցյալի կարևորության մասին դպրոցական նստարանից գիտեմ: Սակայն գնալով անցյալն ինձ համար ոչ միայն ներկա է դառնում, այլև ապագայի ճիշտ հաղորդագրություն, ուղենիշ, որից անդին ոչինչ չպետք է փնտրեմ: Սոցիալական պատկանելության զգացումը անձի հիմնարար պահանջմունքներից է: Դա մարդու ինքնության կառույցի առանցքն է: Ո՞վ եմ ես: Ովքե՞ր են նախնիներս: Ո՞րն է իմ ընտանիքը... Այս և նման մի շարք այլ հարցերի պատասխանների մեջ ես գտնում եմ ինձ, զբաղվում ինքնավերլուծությամբ, գտնում իմ թերություններն ու առավելությունները.... Խոր շունչ եմ քաշում: Հպարտության զգացումից լիաթոք շնչում եմ, և արժանապատվության զգացումը, որ այդքան կարևորում էր Ալ. Մակեդոնացին, գլուխ է բարձրացնում իմ մեջ, բայց ես ոչ թե գոռոզանում, այլ ներքին հպարտության զգացում եմ ապրում: Ես երկխոսում եմ ինքս ինձ հետ... Եվ այդ երկխոսությունն ապարդյուն չէ:

Նախնիների հետ հոգեբանական նույնացումը, ըստ մասնագետների, բարձրակարգության հասնելու պահանջներից է: Չեմ կարծում, թե կարող եմ հասնել բարձրակարգության, բայց չեմ էլ ժխտում, քանի որ այն լիարժեք հոգեկան առողջության համար շատ կարևոր պայման է: Չափազանց շատ եմ սկսել նույնանալ նախնիներիս հետ, իմ անցյալի հետ: Կարո՞ղ եմ, արդյոք, նմանվել նախապապիս՝ Ջավադ Մայիլյանին, որը սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, և որի անունը բուհի մարմարե պատին ոսկե տառերով է գրվել: Շուշիի ուսուցչական ինստիտուտի տնօրեն, կյանքի գերազանցիկ. այսպես են նրա մասին արտահայտվում մարդիկ: Նա իրեն որպես գերազանցիկ պահեց դպրոցում, համալսարանում, աշխատանքային գործունեության ընթացքում, ընտանեկան կյանքում, Մեծ Հայրենականի դառն ու դժնդակ օրերին... Նախապապիս թողած նամակները դաստիարակող են, սաստող: Ինչքա՜ն նվիրում կա դրանց մեջ, անանձնական ուրախություն... Նույնիսկ թշնամուց 300 մետր հեռավորության վրա նրա հավատն ապագայի հանդեպ անկոտրում էր, անվիճելի ու լուսե: Գիտելիք, խիզախություն, նվիրում, կամք, մարդկային բազում որակների մի ամբողջ կառույց, որով քանդակվում է նախապապիս դիմանկարը: Ահա այսպես է իմ նախապապը դարձել պապիս արժանի նախորդը:

Իսկ պապս՝ Լեոնարդ Մայիլյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, Ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսության նախագահ, Արցախյան ազատագրական շարժման ջատագով, գերազանցեց նախապապիս: Նրան հաջողվեց ներթափանցել գենետիկայի խորքերը և հոլանդական ու ամերիկյան անասունների ցեղերի խաչասերումից ստանալ նոր ցեղատեսակ, որի քաշը 280 կգ-ից մինչև 403 կգ է, իսկ օրական կաթնատվությունը՝ 20-25 լիտր:

Ճարտարի բնակչությունն այսօր խորը ակնածանքով ու հարգանքով է խոսում ու պատմում, հիշում ու վկայում պապիս՝ Լեոնարդ Մայիլյանի մասին: Ես քրքրում եմ նրա գրքերը, տնտղում իրերը և աննկարագրելի խորքային ապրումներ ունենում: Դա նման է անցյալի ու ներկայի երկխոսության: Հրճվանքի զգացում եմ ապրում այդ անխոս, թվում է, չկայացած երկխոսությունից: Դա ես եմ ու նախապապս, ես եմ ու Լեոնարդ պապս: Ու հենց այսպես է նախապապիս, ապա պապիս կենսագրությունն ինձ համար դառնում սկզբունք, դիրքորոշում, համոզմունք, գաղափար, ուղենիշ....

Շատ հաճախ ուզում եմ բարձրաձայն զրույցի բռնվել պապիս ու նախապապիս հետ: Ասել, որ ուզում եմ հոգեբան դառնալ, ասել, որ ուզում եմ մարդկանց օգնել, օգտակար լինել: Հետո իմ բառերը վեր ածվում են ներքին մենախոսության և միայն ես եմ լսում այն, ինչ խոսում եմ...

Ես իմ ծնրադիր խոնարհումն եմ բերում և շնորհակալություն ասում նրանց ճիշտ ապրած կյանքի ու անբասիր կենսագրության համար: Երջանիկ եմ ու հպարտ անցյալիս համար, քանզի այսօր ինձ համար այն սոսկ հիշողություն չէ, այլ առողջ ընթացք, լուսե ապագա: Ահա նստել ու աղոթք եմ մտմտում Արարչին՝ նրանց հոգիները լուսավորելու համար:

Մարդի՛կ, ես նոր կյանք եմ հայտնաբերել ինձ համար՝ նախապապիս ու պապիս կենսագրությունն ուսումնասիրելով, և հիմա ինձ համար մեկ ուրիշ թանկ ու նվիրական բան չկա: Ճանաչե՛ք ու ամո՛ւր բռնեք ձեր նախնիներին, քանզի ապագան առանց նրանց երերուն է և անհուսալի:

Լիլիթ ՄԱՅԻԼՅԱՆ
ԱրՊՀ նախադպրոցական հոգեբանության եւ մանկավարժության 3-րդ կուրս

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Խանյանը ընթերցողի սեղանին է դրել մի նոր աշխատություն, որի կարիքը շատ է զգացվում մեր օրերում՝ աղանդավորական կազմակերպությունների անհաճո գործունեության ժամանակներում՝ «Թոնդրակյան աղանդավորական շարժման շիրազյան մեկնաբանումը»՝ հրատարակված ԱրՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ, բուհի միջոցներով:

Չնայած գիրքը նվիրված է մեծանուն Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի վերլուծությանն ու քննությանը, գրականագետը հարկ է համարել նախ անդրադառնալ պատմական Հայաստանում տարածված աղանդավորական շարժումներին՝ դրանք ներկայացնելով որպես հակաեկեղեցական, ժողովրդադավ, հանցավոր երևույթներ, ապա դիտարկել ու գնահատել է պոեմը՝ որպես շիրազյան հանճարի մի նոր դրսևորում, պատմական ու գեղարվեստական, խոհափիլիսոփայական մի նորահունչ ստեղծագործություն:

Գրականագիտական անհրաժեշտ ընդհանրացումներով Ս. Խանյանը քննում է աղանդավորական շարժումների ծագման ժամանակաշրջանները, դրանց էությունը և Հայոց Առաքելական եկեղեցու մղած սրբազան պայքարը դրանց դեմ:

Հենվելով պատմական հավաստի աղբյուրների, մի շարք տեսակետների վրա՝ գրականագետը տեղեկացնում է, որ աղանդավորությունը՝ որպես ուսմունք կամ վարդապետություն, այս կամ այն երկրում խոտորվում է պաշտոնական դավանությունից և հակադրվում նրանց, ապա ընդգծում է, որ այն չի շրջանցել նաև Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը: Սկսած չորրորդ դարից, Հայաստանում տարածում ստացան մանիքեության, բորբորիտների, մծղնեականների և այլ աղանդավորական շարժումներ, իսկ յոթերորդ դարում սկիզբ առավ Պավլիկյան շարժումը, որը մի քանի դար շարունակ ահաբեկման մեջ պահեց եկեղեցուն և պետությանը, հոգևոր և աշխարհիկ իշխանություններին:

9-12-րդ դարերում Հայաստանում տարածվեց թոնդրակեցիների հզոր շարժումը:

Գրքի հեղինակը, հենվելով հավաստի փաստերի վրա, բացահայտում է. «Աղանդավորական այդ շարժումները ամեն դեպքում իրենց ուղղվածությամբ ու նպատակներով եղել են չարիք ոչ միայն պաշտոնական դավանանքների, այլև ժողովուրդների խաղաղ, ստեղծարար աշխատանքի ու անվտանգության ապահովման համար»:

Աշխատության ներածականում նշվում է, որ մանիքեությունը առաջացել է 3-րդ դարում, Մերձավոր Արևելքում: Այն ուղղված է եղել մի կողմից Սասանյանների տիրապետության դեմ՝ որպես սոցիալական բողոք, մյուս կողմից՝ պաշտոնական զրադաշտական կրոնի դեմ: Անվանումը ստացել է սկզբնավորողի՝ Մանիի անունից:

5-րդ դարում պաշտոնական քրիստոնեական միջավայրում մանիքեությունը համարվել է վտանգավոր աղանդ: Նրա դեմ պայքար է ծավալել Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» գրքում: Ս. Խանյանի աշխատության մեջ ծանոթանում ենք նաև մծղնեության ծագմանը: Այն Հայաստանում տարածվել է 5-րդ դարում, իր անունը ստացել է Ասորիքում տարածված «մսալյանա» (աղոթողներ) աղանդից:

Այս աղանդի մասին իր քննական կարծիքն է հայտնել պատմիչ Ղ. Փարպեցին՝ հայոց մարզպան Վահան Մամիկոնյանին ուղղած իր «Թղթում»: Որոշակի մեկնաբանություն է տրվում Պավլիկյան շարժման մասին, որը ծագել է Հայաստանում, ապա տարածվել բյուզանդական կայսրության փոքրասիական տարածքներում: Պավլիկյան շարժման ճնշումից հետո նրա գաղափարներն անցել են Հայաստանում ծնունդ առած թոնդրակյան շարժմանը: Շարժման վերաբերյալ իրենց բացասական կարծիքն են հայտնել Գրիգոր Նարեկացին, Ասողիկը, Գրիգոր Մագիստրոսը, Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուռհայեցին և ուրիշներ: Գրքում բերվում է մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի կարծիքը թոնդրակյան շարժման վերաբերյալ, ըստ որի՝ թոնդրակեցիները ժխտում էին եկեղեցու բոլոր կարգերը: Չէին ընդունում Քրիստոսին՝ իբրև աստված, մերժում էին Սուրբ գիրքը, երրորդության գոյությունը, հանդերձյալ կյանքը, հոգու անմահությունը և այլն: Չէին հարգում և նույնիսկ ոչնչացնում էին եկեղեցիները, խաչերը, խաչքարերը, արհամարհում էին սրբերին:

Մ. Աբեղյանը թոնդրակյան շարժումը համարում է ծայրահեղության հասած բողոք: Ասել է թե՝ ամեն մի ծայրահեղություն հակասում է կյանքի բնականոն ընթացքին: Ս. Խանյանը կոնկրետ փաստերի վկայությամբ նշում է, որ խորհրդային տարիներին առանձին հայագետներ թոնդրակյան շարժումը համարել են սոցիալական շարժում: Դեռ ավելին, «Հայաստանի Սովետական հանրագիտարան»-ում այն գնահատվում է որպես միջնադարյան Հայաստանի հասարակական-գաղափարական կյանքի ամենանշանակալից հեղափոխական երևույթներից մեկը:

Գրականագետն այս գաղափարաբանության հետևանք է համարում անվանի բանաստեղծ Վ. Դավթյանի «Թոնդրակեցիներ» դրամատիկական պոեմը, որտեղ թոնդրակյան շարժումը միտումնավորությամբ ներկայացվում է որպես արդարացիոսոցիալական պայքար, իսկ նրա ղեկավար Սմբատ Զարեհավանցին համարվում է ժողովրդական հերոս:

Ս. Խանյանը, ներկայացնելով պատմիչների և հայագետների կարծիքները, հաստատում է, որ թոնդրակյան շարժումը հակաեկեղեցական, հակապետական շարժում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն անընդմեջ մաքառում էր պարսկական, բյուզանդական հզոր տերությունների դեմ՝ հանուն իր անկախության և արդարության, միաժամանակ՝ երկիր ներխուժած թուրք-սելջուկյան վայրենի ցեղերի դեմ:

Գրականագետը բարձր է գնահատում Հայ Առաքելական եկեղեցու պատմական դերը ժողովրդի ազգային դիմագիծը պահպանելու գործում: Դեռ ավելին՝ հայոց եկեղեցու հայրերը, զինված Քրիստոսի հավատով ու խաչի զորությամբ, միշտ զորավիգ են եղել հայ աշխարհազորայիններին՝ պատերազմների ժամանակ: Այդպես է եղել և՛ Վարդան Մամիկոնյանի, և՛ Եսայի ապու Մուսեի, և՛ Սարդարապատի դյուցազն զորապետների գլխավորությամբ ազգապահպան ճակատամարտերի ժամանակ:

Խանյանը մի առանձին հպարտությամբ է նշում Արցախի ազգային-ազատագրական պայքարի տարիներին հայոց եկեղեցու Արցախյան թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ազգանվեր ջանքերը, որի շնորհիվ նա արժանացավ «Արցախի հերոս» բարձր կոչմանը:

Գրքի հաջորդ երեք մասերում վերլուծվում ու գնահատվում է Հ. Շիրազի «Թոնդրակեցիները» բարձրարվեստ գործը: Խանյանը նշում է, որ Հ. Շիրազն իր պոեմն ավելի վաղ է ստեղծել, քան Վ. Դավթյանն իր «Թոնդրակեցիներ» երկը: Սակայն Շիրազի պոեմը մոտ կես դար մնացել է անտիպ: Միայն 2014թ. գրականագետ Սամվել Մուրադյանի ջանքերով այն լույս ընծայվեց: Հ. Շիրազի պոեմը բաղկացած է նախերգանքից, երեք մասից, վերջերգանքից: Երկի հիմնական գաղափարն առնչվում է պատմական ճշմարտությանը: Ընդգծվում է հատկապես այն հանգամանքը, որ մեծ բանաստեղծը չի ընդունել խորհրդային տարիներին գրողներին պարտադրված գռեհիկ հասարակաբանության գաղափարաբանությունը:

Վերլուծելով ու գնահատելով շիրազյան այդ չափածո երկը՝ Ս. Խանյանը, կոնկրետ հատվածներ բերելով, բնութագրում է դրական ու բացասական կերպարների ներաշխարհը, ընդգծում Շիրազ բանաստեղծի հստակ աշխարհայեցողությունը, պատմական երևույթների խորքային իմացությունն ու պատկերավոր մտածողության անսպառ եզրերը: Ի դեպ, պոեմի բոլոր հերոսները պատմական անձնավորություններ են: Հանդես են գալիս Մ. Գոշը, սարկավագ Ասողիկը, կաթողիկոսը, Սմբատ Զարեհավանցին, Բագրատունի Սմբատ արքան, սպարապետ Վահրամ Պահլավունին և ուրիշներ:

Պոեմում ներկայացվող երդվյալ թոնդրակեցիները ևս պատմական անձնավորություններ են: Սակայն, ինչպես նշում է Ս. Խանյանը, պատմական այդ դեմքերը պոեմում հանդես են բերված որպես գեղարվեստական լիարյուն կերպարներ:

Շիրազյան պատմահայեցողությունն իր ճշմարիտ ու գեղագիտական ընդգրկումներով բացահայտվում է արքայի շուրթերով: Լսելով Սմբատ Զարեհավանցու՝ հողի վերաբերյալ պահանջը, արքան ներկայացնում է հայոց վտանգված պետության անելանելի վիճակը.

Հող թողեցի՞ն թաթարն ու թուրք,
Որ ձեզ հող տամ, ով խելագուրկ,
Ծաղկոտն հող չէ՞ր, ո՛վ դու անհաշտ,
Որ դարձրիք տատասկաբույն,
Թոնդրակն հող չէ՞ր, ո՛վ մարմնապաշտ,
Որ դարձրիք լոկ մարմնատուն:

Ե՛վ սպարապետին, և՛ արքային հուզում է ժողովրդի ճակատագիրը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ երկիր են ներխուժել թուրքը, թաթարը, իրենց զավթողական պահանջներն են ներկայացնում պարսկական ու բյուզանդական բռնապետությունները:

Ուսումնասիրության հեղինակը պոեմի վերջին՝ երրորդ մասը, համարում է շիրազյան պատկերավոր մտածողության փայլուն օրինակ: Թոնդրակյան շարժումը գնահատվում է որպես աղետ հայոց հողի համար: Խանյանը տեղին ու նպատակային ընդհանրացումներով բացահայտում է հայրենասեր կաթողիկոսի խոհերը՝ շիրազյան գաղափարը կրկին մատնացույց անելու միտումով:

Ազգ են տրոհում, պառակտում, այն էլ՝
ազգի սև ժամին:
Երբ թուրանաթուր ցեղերն են խուժում՝
չորս կողմից՝ զորքված,
Ծերացանք՝ էլ ե՞րբ մեր ճամփան բանաս՝
ծաղկունքով գորգված:
Սելջուկը հայոց բերդն է կործանում,
Թոնդրակը՝ հայոց կրոնն ազգապահ,
Հայոց սրբությանց իղձն են եղծանում,
Երկուսն էլ մեկտեղ՝ մեկ բան են, մեկ պահ:
Զույգն էլ սատանի սև ձեռքով հաստված՝
Պղծելով հարսներ, տաճար ու կույսեր,
հույսեր ու աստված:

Ս. Խանյանի հավաստմամբ՝ Հ. Շիրազը ներկայացրել է շարժումն իր հայեցողությամբ, բայց և այն սպառիչ գնահատական չի համարել:

Գրականագետը Շիրազի պոեմի վերջին գլուխը մեկնաբանում է որպես մի ընդհանրացնող պատկեր թոնդրակյան շարժման և նրա պարագլուխների, թոնդրակեցիների անփառունակ վախճանի մասին:

Հիրավի, խորախորհուրդ են շիրազյան պատմահայեցողությունը, ընկալումների փիլիսոփայական խորքը, պետականության ընկալման նրա գաղափարաբանությունը: Որպես ապացույց գրականագետը գրքի «Եզրակացություն» բաժնում, իբրև խորհուրդ գալիք սերունդներին, մեջբերում է շիրազյան կենսափիլիսոփայությունն արտահայտող տողերը.

Ո՛վ մարդ, մի բանի պիտի հավատաս,
Թեկուզ ունայնի, որ ահ ունենաս,
Մի ոգեձայնի պիտի հավատաս,
Որ քեզ հայր լինի՝ միշտ մանուկ մնաս:
.....
Ո՛վ մարդ, մի բանի պիտի հավատաս,
Մարդուց վեհ բանի, որ աստվածանաս:

Ընդհանրացնելով վերլուծական-քննական իր խոսքը՝ Ս. Խանյանը պոեմի գաղափարագեղարվեստական արժեքի մասին գրում է. «Շիրազյան պոեմը թոնդրակյան երեքդարյա գոյությունը ներկայացնող ալեկոծ մի ծով է, որի յուրաքանչյուր բառ մի ալիք է, յուրաքանչյուր տող՝ ընդգծված շրջագիծ, յուրաքանչյուր գլուխ՝ կապտակոհակ հեռաստան, իսկ ընդհանրության մեջ՝ պատմական, հասարակական, քաղաքական, ազգային, ազգամիջյան, սոցիալական, կենցաղային բազմաշերտ կախարդական հայելի, շիրազված մի գանձարան: Այդ կախարդանքին Շիրազը հասել է ժողովրդի անցյալի խորքային իմացությամբ, Հայաստան երկրի բազմաճյուղ կնճիռների շոշափումով, աղանդավորական շարժումների պատճառների ուսումնասիրությամբ, ժողովրդի կյանքում պետության դերի ու նշանակության փիլիսոփայությամբ, միջնադարի լեզվաոճական շերտերի յուրացմամբ, իր աստվածատուր տաղանդի կիրառմամբ: Ահա թե ինչու էջից էջ, գլխից գլուխ որպես ընթերցող մոռանում ես քո ժամանակը, թափանցում դարերի խորքը, փաստերի ու իրադարձությունների խառնարանում քեզ ներկայացնում իբրև այդ ժամանակների ծնունդ ու մասնակից:

Հ. Շիրազի «Թոնդրակեցիները» փիլիսոփայական, խորքային, բարձրարվեստ, բազմաշերտ ստեղծագործություն է, որի քննությունը անսպառ է, խորքային իմացություն և կայուն պատմահայեցողություն է պահանջում: Հիրավի, Ս. Խանյանը հասել է նպատակին՝ իր նոր, ծանրակշիռ խոսքը բերելով շիրազագիտության ասպարեզում:

Ուսումնասիրությունը հավաստում է, որ Մեծն Շիրազի պատմափիլիսոփայական այս երկը ստեղծված է գալիք սերունդների համար՝ որպես աստվածահաճո դաս ու խորհուրդ:

Ա. ԱԹԱՅԱՆ
ԱրՊՀ, բ.գ.թ.

Խոսք երախտագիտության

ՀԱՐԱՏԵՎ ԳԱՐՈՒՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2016 թվականի ամառն էր... Ապրիլյան պատերազմից անցել էր շատ կարճ ժամանակ: Վերքերը խորն էին, դեռ արյունահոսում էին և մրմռում:

Նոր Շահումյանի շրջանի Նոր Կարաչինարի միջնակարգ դպրոցի շենքը բավականին անմխիթար վիճակում էր, և բնավ չէինք էլ ակնկալում որևէ առաջընթաց կամ փոփոխություն: Պատերազմ էր:

Սակայն...

Ամեն ինչ սկսվեց Շահումյանի շրջանի Նոր Կարաչինարի համագյուղացիներ, մոսկվաբնակ բարերարներ Կարեն, Աշոտ և Մարտիկ Խաչատրյանների այցից հետո: Այցելելով դպրոց, որն անվանակոչված է նրանց եղբոր՝ Արամայիս Խաչատրյանի անունով, նրանք որոշում կայացրին հիմնովին նորոգել դպրոցի շենքը և ապրիլյան օրերից հետո որոշումն այդ սկսեցին իրագործել օգոստոս ամսին: Սկսվեցին վերանորոգման աշխատանքները: Ոգևորությունը բուռն էր, և ապրիլյան գարնան ծիլերը շիվ տվեցին համայնքի բոլոր բնակիչների, ուսուցիչների և աշակերտների հոգում: Չկար մեկը, որ կարող էր անտարբեր նայել այդ ոգևորությանը: Չէր կարելի ասել, թե աշխատանքները դյուրին էին ընթանում և հեշտությամբ հաղթահարվեցին: Ոչ: Մոտենում էր ուսումնական տարին, նախաշեմին էր ձմեռը: Եվ այստեղ ի հայտ եկան թե՛ Նոր Կարաչինար համայնքի ղեկավար Հայկազ Զաքարյանի և թե՛ միջնակարգ դպրոցի տնօրեն Ռուզաննա Ալլահվերդյանի համատեղ, հմտորեն կազմակերպած աշխատանքները, ինչի արդյունքում շինարարությունը ընթացավ իր հունով, և ուսումնական գործընթացը դպրոցում չխաթարվեց: Մեծ էր ոգևորությունը, հույսն ու ուրախությունը՝ ավելին: Ինչևէ...

Դպրոցի շենքը, շնորհիվ բարերար Խաչատրյանների, նորոգվեց հիմնովին, ժամանակակից պայմաններին համահունչ: Բայց Նոր Կարաչինարում արդեն ձմեռ է, ու այն էլ՝ խիստ: Խստաշունչ ձմռան ցուրտը մեղմեցին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարները, որոնց դիմել էր դպրոցի տնօրեն Ռուզաննա Ալլահվերդյանը: Նրանք դպրոցին տրամադրեցին անհրաժեշտ քանակությամբ էլեկտրական ջեռուցիչներ, իսկ Խաչատրյան եղբայրները պարտավորվեցին վճարել ծախսված էլեկտրաէներգիայի գումարը: Կարծես կրկին գարուն բացվեց Նոր Կարաչինարի միջնակարգ դպրոցում:

Խոստովանած կլինեմ, եթե ասեմ, որ կային մարդիկ, որոնք չէին հավատում այս համագործակցության բարեհաջող ավարտին: Բայց այսօր փաստ է, որ դպրոցը հիմնանորոգված է, ու այդ մեծագույն բավականությունը աշակերտներին, ուսուցիչներին և համագյուղացիներին պատճառել են կարաչինարցի մոսկվաբնակ Խաչատրյան եղբայրները՝ ներդնելով մոտ 500 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Այսօր կարաչինարցի մանուկը հաճույքով է հաճախում բարեկարգ, տաք դպրոց, չի վախենում պատերազմից և պատրաստ է պաշտպանելու հարազատ կրթօջախը:

Կարծես գարունը հարատև է դարձել դպրոցում:

Հարգելի՛ խմբագրություն, Ձեր միջոցով ցանկանում ենք մեր երախտագիտության խոսքն ուղղել բոլորին և հատկապես Խաչատրյան եղբայրներին՝ Նոր Կարաչինարի միջնակարգ դպրոցին կրկին ամենայն աջակցություն ցուցաբերելու համար:

Գործում է դպրոցը, ուրեմն՝ հարատևում է գյուղը:

Ալվարդ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Շահումյանի շրջանի
Նոր Կարաչինարի
միջն. դպրոցի ուսուցչուհի

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Խրատի՛ր որդուդ, որպեսզի այդպես բարի հույս լինի քեզ համար....»

(Առակ19:18)

Դաստիարակություն հասկացությունը չափազանց լայն է: Երեխաները դաստիարակվում են ոչ միայն բառերով, այլ նախ և առաջ ծնողների օրինակով: Ինչպես անգլիացի մասնագետներն են ասում՝ «Մի դաստիարակիր երեխայիդ, նա միևնույն է՝ քեզ նման է լինելու: Դաստիարակիր ինքդ քեզ»: Լիակատար ներդաշնակության համար ընտանիքում պետք է լինի երկու ծնող. մայրը մարմնավորում է քնքշություն, սեր, ջերմություն ու հոգատարություն, իսկ հայրը՝ ուժ, պաշտպանություն, վստահություն ու կայունություն: Սա ընտանիքի կատարյալ մոդելն է:

Ընտանիքի դաստիարակության գլխավոր պայմանը Ա. Մակարենկոն համարում է լիարժեք ընտանիքը, որտեղ հայրը և մայրն ապրում են համերաշխ, որտեղ թագավորում են սերն ու փոխադարձ հարգանքը: Նման ընտանիքներում զարգանում ու ձևավորվում են գիտակից, նպատակասլաց, հարուստ ներքնաշխարհով անձնավորություններ:

Հայտնի է, որ անձնավորության ձևավորման և կայացման գործընթացի վրա ազդում է երկու գործոն՝ ժառանգական և սոցիալական: Առաջինը հանդես է գալիս ժառանգական կոդի տեսքով՝ փոխանցվելով ծնողներից և ենթակա չէ փոփոխման: Երկրորդը մարդու սոցիալական միջավայրն է, որտեղ մարդը գործունեության միջոցով փոխհարաբերությունների մեջ է մտնում այլ մարդկանց հետ: Արդյունքում ձևավորվում է նրա սոցիալական գործունեության և սոցիալական հարաբերությունների աշխարհը: Վերջինս էլ իր հերթին նպաստում է մարդու ներքնաշխարհի կամ այլ կերպ ասած՝ հոգեկանի ձևավորմանն ու զարգացմանը:

Մարդը լույս աշխարհ է գալիս որպես կենսաբանական էակ՝ անհատ: Անհատի՝ որպես անձնավորության, կայացումը տեղի է ունենում ամբողջ կյանքի ընթացքում՝ սոցիալականացման շնորհիվ: Անձի սոցիալականացումը տեղի է ունենում հետևյալ փուլերով.

1. Ադապտացիոն փուլ: Ընդգրկում է ծնված օրվանից մինչև դեռահասության տարիքը:

2. Անձնավորման փուլ: Այս փուլում երեխայի մեջ դրսևորվում է իրեն ուրիշներից անջատելու ցանկությունը:

3. Ինտեգրման կամ միաձուլման փուլ: Այս փուլի ընթացքում անձի մեջ հասարակական գործընթացներում ներառվելու ցանկություն է առաջանում: Ինտեգրումը հաջող է ընթանում, երբ մարդն ընդունվում է խմբի, հասարակության կողմից: Իսկ երբ չի ընդունվում, հակադրվում է շրջապատին, դրսևորում ագրեսիվություն կամ փոխում իրեն, ձգտում դառնալ բոլորի նման և դրսևորում է հարմարվողական վարքագիծ՝ արտաքուստ հարմարվում է շրջապատին:

4.Աշխատանքային փուլ: Անձը էական ներդրում է բերում սոցիալական փորձի վերարտադրման գործում՝ այն նոր սերնդին փոխանցելու գործընթացում:

Այսպիսով՝ սոցիալականացման նպատակն է անձի կողմից իր սեռին, տարիքին համապատասխան սոցիալական դերի գիտակցումը: Ես-համակարգը մարդու պատկերացումն է իր մասին: Ես-կառույցի հզոր մասն է կազմում սեռային ինքնագիտակցությունը: Սեռային ինքնագիտակցությունը մարդու կողմից սեփական անձի՝ այս կամ այն սեռին պատկանելու գիտակցումն է: Ծնված պահից ի վեր երեխան զարգանում է որոշակի սեռային պատկանելությամբ՝ արական կամ իգական: Արդեն վաղ տարիքում սեռադերային սոցիալականացման արդյունքում ձևավորվում է երեխայի սեռային ինքնագիտակցությունը:

Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարևորագույնը ընտանիքն է: Ընտանիքի որոշիչ դերը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն սոցիալական առաջին միկրոմիջավայրն է, որում միջանձնային հարաբերությունների և ծնողների հետ նույնականացման շնորհիվ երեխան յուրացնում է իր սոցիալական դերը, և հեց այստեղ էլ սկսվում է դաստիարակության գործընթացը:

Որոշ ժամանակ ընտանիքն ընդհանրապես այն միակ միջավայրն է, որտեղ երեխան յուրացնում է հասարակական փորձը: Հետագայում մարդու կյանքում հայտնվում են հասարակական ինստիտուտներ՝ մանկապարտեզ, դպրոց, բակ և այլն: Սակայն այս դեպքում էլ ընտանիքը՝ որպես սոցիալական միջավայր, պահպանում է իր գերակա դերը մարդու սոցիալականացման գործընթացում:

Երեխայի սոցիալականացումն ընտանիքում ընթանում է երկու ուղղությամբ: Մի դեպքում այն տեղի է ունենում ծնողների, քույրերի և եղբայրների հետ երեխայի անմիջական շփման արդյունքում: Մյուս դեպքում երեխան յուրացնում է սոցիալական փորձը՝ դիտելով ընտանիքի մյուս անդամների միջև ծավալվող փոխհարաբերությունները: Երեխայի անձնավորության կայացումն ընտանիքում կարող է լինել տարերային կամ էլ նպատակաուղղված՝ ընտանեկան դաստիարակության շնորհիվ: Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է կյանքի յուրահատկությամբ, ինքնատիպությամբ, կենսական պայմաններով:

Ա.Ս. Մակարենկոն «Գիրք ծնողների համար» գրքում զգուշացնում է իր ցուցումներին չվերաբերվել իբրև դեղատոմսի, որ ամեն ընտանիք յուրօրինակ է, որ կյանքը բազմաձև է, և անհրաժեշտ է ամեն մի առանձին դեպքում մոտենալ ոչ թե պատրաստի դեղատոմսով, այլ սկզբունքների ստեղծագործական կիրառումով, որն էլ նրա համակարգի հիմքն է:

Երեխայի անձի կայացման գործում ծնողների դերը կարևորվում է նրանով, որ նրանք երեխայի և արտաքին աշխարհի միջև հանդես են գալիս որպես միջնորդ: Երեխան լույս աշխարհ է գալիս՝ պատկերացում չունենալով աշխարհի մասին: Նա աշխարհն ընկալում և յուրացնում է այնքանով, որքանով որ՝ մեծահասակները և, առաջին հերթին, ծնողներն են նրան մատուցում այդ աշխարհը: Իսկ արտաքին աշխարհի յուրացումը հանգեցնում է երեխայի հոգեկանի զարգացմանը: Այսպիսով, մեծահասակները (ծնողները) անմիջական ազդեցություն են ունենում երեխայի ներքնաշխարհի ձևավորման վրա:

Սակայն անձի կայացումը բնութագրվում է ոչ միայն ներքին փոփոխություններով, այլև արտաքին դրսևորումներով՝ վարքագծով: Թե որքանով է մարդը (երեխան) կայացել որպես անձնավորություն՝ հասարակական էակ, կարելի է դատել նրա դրսևորած վարքագծից: Այստեղ նույնպես նկատելի ազդեցություն ունեն մեծերը, քանի որ երեխաները, իրենց նույնացնելով ծնողների հետ, կրկնօրինակում, պատճենում են նրանց վարքը: Նրանք ծնողներից ինչ տեսնում, այն էլ սովորում են: Եվ եթե փորձենք ասվածը ներկայացնել մեկ նախադասությամբ, ապա տեղին է հիշել ժողովրդական ասացվածքը՝ «Երեխան ընտանիքի հայելին է»: Նախադպրոցականի սեռադերային սոցիալականացումն ընտանիքում տեղի է ունենում ծնողների հետ նույնականացման շնորհիվ: Ընդ որում՝ ըստ հետազոտողների, նույնականացման գործընթացը տղաների և աղջիկների մոտ տարբեր կերպ է ընթանում: Տղայի նույնականացումը հոր կամ այլ տղամարդկանց հետ ավելի բարդ է ընթանում, քան աղջկա նույնականացումը մոր կամ այլ կանանց հետ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ տղաները ստիպված են հաղթահարել նախնական նույնականացումը կանանց, մասնավորապես մոր, կին դաստիարակների, կին դայակների հետ, որոնց հետ նրանք ավելի շատ ժամանակ են անցկացնում: Տղամարդկային դերի մասին պատկերացումն ավելի դժվար է ձևավորվում, քանի որ նրանք կարծես դուրս են մղված մանկան աշխարհից, գրեթե չեն մասնակցում երեխաների դաստիարակությանը և հետևաբար՝ մատչելի չեն նույնականացման համար: Հայաստանում ծնողների մոտ 30%-ը սխալ է դաստիարակում երեխաներին, տղամարդկանց 80%-ը ընդհանրապես չի մասնակցում նրանց դաստիարակությանը, ինչն ամենամեծ բացթողումներից է, իսկ տատիկ-պապիկներն էլ հաճախ ոչ թե դաստիարակում են երեխային, այլ երես տալիս ու փչացնում: Այսպիսի եզրահանգման է եկել Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբան Սամվել Խուդոյանն իր պրակտիկայի ընթացքում:

Այդ իսկ պատճառով տղա երեխաները կանացիության և առնականության հատկանիշները հակադրում են միմյանց, և առնականության ձևավորումը նրանց մեջ հաճախ հանգեցնում է կանացիության գծերի բացարձակ ժխտմանը: Ուստի ծնողները պետք է մեծ ուշադրություն դարձնեն տղա երեխաների մեջ առնականության գծերի մասին ճիշտ պատկերացում ձևավորելու գործընթացին: Երեխաները պետք է հասկանան, որ առնականությունը սկսվում է սեփական արժանիքների և պատասխանատվության զգացումից: Քանի դեռ տղաները փոքր են, նրանց մեջ եղած առնականության գծերը կարող են դրսևորվել վարքագծում՝ զիջել տեղն աղջկան, նրան առաջ թողնել և այլն: Մանկավարժական շատ աշխատություններում ընդգծվում է ծնողների խաչաձև ազդեցությունը երեխաների սեռադերային դաստիարակության գործընթացում՝ հոր ազդեցությունը դստեր և մոր ազդեցությունը՝ որդու վրա: Սակայն հատկապես կարևոր է հոր դերը տղա երեխայի սեռադերային դաստիարակության գործում, քանի որ տղամարդուն բնության կողմից տրված է ռիսկի, արկածախնդրության ձգտումը, որը բացակայում է կնոջ բնության մեջ:

Ամենուր կարելի է լսել «Երեխաները մեր ապագան են», «Ամեն ինչ՝ երեխաների համար», «Ինչ անում ենք, մեր երեխաների համար ենք անում» և այլ արտահայտություններ: Ցավոք, ոչ բոլոր ընտանիքներում են գործում այս արտահայտություններին համապատասխան՝ պատճառաբանելով զբաղվածությունը, կնոջ ուսերին թողնելով ոչ միայն ընտանիքի հոգսը, այլ նաև երեխայի դաստիարակության խնդիրները:

Եթե տղա երեխայի դաստիարակությանը հայրը չի մասնակցում, ապա դանդաղում է երեխայի մեջ առնականության այնպիսի հատկանիշների ձևավորումը, ինչպիսին են քաջությունը, ինքն իրեն և ուրիշներին պաշտպանելու պատրաստակամությունը, տղամարդկային հպարտությունն ու պատասխանատվության զգացումը:

Հայր ծնողի բացակայության դեպքում ցանկալի է, որ նրան փոխարինի մեկ այլ հասուն տղամարդ՝ քեռի, հորեղբայր, ընկեր կամ ուսուցիչ, որին էլ հետագայում նա կփորձի նմանվել:

Շատ հեղինակներ նշում են հայր ծնողի հետևյալ գործառույթները.

- ընտանիքի ղեկավար և կերակրող,
- ընտանիքի պահապան և պաշտպան,
- երեխաների դաստիարակ,
- որդիների համար ընդօրինակման օբյեկտ, իսկ դուստրերի համար՝ առնականության չափանիշ,
- կնոջ և երեխաների համար՝ ընկեր և խորհրդատու:

Սակայն պետք է նշել, որ մեր օրերում այս բոլոր գործառույթները կատարում են նաև կանայք: Զրկելով տղամարդկանց իրենց այդ գործառույթներից՝ էլ ավելի մեծ վտանգ է ստեղծվում տղա երեխաների սեռադերային դաստիարակությունը ճիշտ և ժամանակին իրականացնելու համար: Պատահական չէ, որ մի շարք երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Հունգարիայում հանրությունը ձգտում է, որպեսզի նախադպրոցական կրթարաններում տղամարդ դայակներ նույնպես ընդգրկվեն:

Այսպիսով՝ անկասկած է ընտանեկան դաստիարակության դերն ու նշանակությունը երեխայի սեռային ինքնագիտակցության ձևավորման և զարգացման գործում: Ավանդաբար դաստիարակության գլխավոր և կարևորագույն ինստիտուտը ընտանիքն է: Այստեղ են դրվում նախադպրոցական տարիքի երեխաների սեռային ինքնագիտակցության հիմքերը:

Հետևաբար, ընտանիքում երեխաների սեռադերային սոցիալականացման գործընթացը կազմակերպելիս ծնողները պետք է միշտ հիշեն.

1. Ընտանիքում երեխայի դաստիարակությամբ պետք է զբաղվեն հայրը և մայրը, իսկ այն կարծիքը, թե երեխաների դաստիարակությունը միայն մոր պարտականությունն է, իսկ հոր պարտականությունն է ապահովել ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցությունը, միանշանակ սխալ է:

2. Ծնողների խոսքը միշտ պետք է համապատասխանի գործին: Հայրը դժվար թե կարողանա արգելել երեխային ծխել կամ ալկոհոլ օգտագործել՝ պատճառաբանելով, որ դա վնասակար է առողջությանը, եթե ինքն էլ ծխում է կամ ալկոհոլ օգտագործում:

3. Ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելիս ինչպես ծնողների, այնպես էլ մեծերի՝ տատիկ-պապիկների պահանջները երեխաներից յուրաքանչյուրի համար պետք է նույնը լինեն և համապատասխանեն սեռին: Երեխաները պետք է օգնեն մեծերին՝ լինի դա աղջիկ թե տղա, սակայն աղջիկը պետք է օգնի հատկապես կանացի տնային գործերում, իսկ տղան՝ հատկապես ծանր աշխատանքների դեպքում:

Սուսաննա ԱՎՇԱՐՅԱՆ
Ստեփ. հ. 5 մանկապարտեզի տնօրեն

ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՆ ԿԱՌՈՒՑՈՂԸ

Զրույց երիտասարդ ուսուցչուհու հետ

Արմինե Մարգարյանը Շահումյանի շրջանի Նոր Վերինշեն գյուղի դպրոցում անգլերեն է դասավանդում 2014 թվականից: Համալսարանի 4-րդ կուրսում էր, երբ անհատական գրաֆիկով կարողացավ ի կատար ածել ուսուցչուհի դառնալու իր երազանքը:

- Արմինե՛, բավականին երիտասարդ էիք, երբ առաջին անգամ դպրոց մտաք որպես ուսուցչուհի, դժվար չէ՞ աշխատել փոքր դպրոցում.

- Փոքր դպրոցում աշխատելն առհասարակ շատ պատասխանատու գործ է, որովհետև 45 րոպեն ամբողջովին բավարարում է անհատական մոտեցմամբ ինչ-որ բան ուսուցանել 4-5-հոգանոց դասարանում: Առաջին քայլերս դպրոցում, չէի ասի, թե դժվար էին, գուցե այն պատճառով, որ շատ եմ սիրում աշխատանքս: Պարզապես չեմ նկատել առկա դժվարությունները:

- Կա՞ն թերություններ, որոնք նկատել եք կրթական համակարգում, և ինչպե՞ս կարող ենք գյուղական դպրոցներում փոքրիկ արցախցիների համար առավելագույնս լավ կրթություն ապահովել:

- Արցախյան իրականության մեջ դեռ չեմ առնչվել այնպիսի թերությունների, որոնք համընդհանուր լինեն: Երեխաների համար հնարավորինս լավ կրթություն ապահովելու համար նախևառաջ պետք է նվիրվել սեփական գործին, պետք է լինել աշակերտի ավագ ընկերը: Երբ վստահություն և փոխադարձ հարգանք լինի, դասավանդման ողջ գործընթացն էլ շատ ավելի հեշտ կլինի: Ժամանակին համընթաց պետք է քայլել նաև դպրոցում՝ ամեն օր նորացնելով դասավանդման ձևը, հետաքրքիր դարձնելով այն:

- Դպրոցում, անշուշտ, այն հասարակությունն է ձևավորվում, որի ձեռքում է մեր երկրի ապագան: Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն պետք է լինի այդ հասարակությունը.

- Կարծում եմ՝ այդ հասարակությունը ամենից առաջ պետք է լինի իր իրավունքներն ու պարտականությունները հստակ ճանաչող և իրագործող: Դպրոցը մեծ դեր ունի այդ գործում, քանզի նա պետք է կարողանա պատրաստել հայրենասեր հասարակություն:

- Արմինե՛, իսկ ինչպիսի՞ն են այսօրվա երիտասարդությունը և ավագ սերունդը:

- Այսօրվա երիտասարդն ավելի համարձակ է, չի սիրում նույն տեղում կանգնած մնալ, կարողանում է ինքնակրթությամբ զբաղվել: Ես ուրախությամբ նկատում եմ, որ այսօր մեր երկրի տարբեր ոլորտներում հաջողությամբ աշխատում են երիտասարդ մասնագետներ, իսկ ավագ սերունդն, իհարկե, օգնում է իր խորհուրդներով և փորձով: Նաև շատ ուրախ եմ, որ այսօրվա երիտասարդը ձգտում է աշխատել իր հայրենիքում, ոչ թե նրա սահմաններից դուրս:

- Ո՞րն է ուսուցչի ամենամեծ ուրախությունը:

- Իր աշակերտի հաջողությունը տեսնելն է, իր աշխատանքի պտուղները վայելելը: Մեծ է ուսուցչի աշխարհը, որտեղ սովորում է նաև ինքը: Գիտե՞ք, կարծես ինչ-որ բան թերի է մնում, երբ մարդ կանգ է առնում ու դադարում է սովորել: Իսկ այս մասնագիտությունը ինքնակրթությամբ զբաղվելու հնարավորություն է տալիս բոլոր մասնագիտություններից շատ:

- Ի՞նչ կմաղթեիք երիտասարդներին, ովքեր մտադիր են աշատանքի անցնել գյուղական դպրոցներում:

- Ուժ և ջանասիրություն, որ հաղթահարեն խոչընդոտները ու առաջ շարժվեն: Վստահ ու հպա՛րտ մտեք դպրոց, որովհետև ձեր ձեռքում է երկրի ապագան:

Արաքսյա ՄԻՐԶՈՅԱՆ
ԱրՊՀ լրագրություն, 2-րդ կուրս

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ

ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԵՎ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Հավաստի հայտնի է, որ Հայաստանի տարածքում դեռևս հինգ հազար տարի առաջ յուրացվել է մետաղների ստացումն ու մշակումը:

Հայտնի մետաղներից հետևյալ **մետաղներն** ունեն իրենց հայկական անվանումները՝ ոսկի, արծաթ, կապար, երկաթ, անագ, պղինձ, սնդիկ և կապարարծաթ: (Ռոբերտ Բաղչաջյան-Բնագիտական եզրերը ժամանակակից հայերենում Սուրբ Ղազար միաբանության Բազմավեպ հայագիտական բանասիրական գրական հանդես, 2002թ., N1-4, էջ 82-95): Որտեղից են հայտնվել այդ մետաղների անվանումները, ինչո՞ւ են դրանք հնչում այդպես, ունե՞ն, արդյոք, ինչ-որ խորը իմաստ:

Նշված մետաղների լատիներեն անվանումները կապված են ստացման վայրի և հատկությունների հետ: Օրինակ՝ Cuprum -**Կիպրոս** կղզու անվանումն է, որտեղ արդյունահանվել է պղինձը, Aurum–դեղին, Argentum-սպիտակ, փայլուն: Եվ նշված անունները ոչ մի տեղեկություն չեն տալիս մետաղի մասին: Հետաքրքիր վարկած է առաջարկվել Էդուարդ Այանյանի կողմից Ереван ամսագրում տպագրված հոդվածում (Эдуард Айанян—С металом в голосе, Ереван, 2007, сентябр, стр.110), որտեղ վերը նշված մետաղների շարքից չորս մետաղների անվանումները (ոսկի, արծաթ, կապար, անագ) հեղինակը կապում է հայկական **այբուբենի** տառերի թվային արժեքների հետ: Հայտնի է, որ հայկական տառերն օգտագործվել են նաև որպես թվեր երկու համակարգով՝ 36 տառերն ըստ հերթականության նշանակել են 1-36 թվերը, իսկ այլ համակարգով՝ 1-9000 թվերը:

Այժմ անդրադառնանք Էդուարդ Այանյանի հոդվածում արծարծվող վարկածին: Նա ոսկի, արծաթ, կապար և անագ մետաղների անվանումները դիտարկել է անսովոր տեսանկյունից և ստացել ցնցող արդյունքներ:

Ոսկի բառի յուրաքանչյուր տառի տակ գրենք հայկական այբուբենում նրա կարգաթիվն ու գումարենք, ստացվում է 79, որը ոսկու կարգաթիվն է:

Ո Ս Կ Ի Au79
24 + 29 + 15 + 11 = 79

Հայտնի է, որ ատոմի միջուկի լիցքը համընկնում է **քիմիական տարրերի** Դ.Ի. Մենդելեևի պարբերական համակարգում տարրի կարգաթվի հետ և կոչվում է տարրի ատոմային համար: Արդյո՞ք դա զուտ պատահականություն է:

Արծաթ մետաղի անվանման **աթ**-ը վերջածանցն է:

Ա Ր Ծ Ag47
1 + 32 + 14 = 47

Հաջորդը **կապար** մետաղն է, որը հայոց լեզվի բարբառներում ժողովրդի կողմից օգտագործվում է որպես արճիճ:

Ա Ր Ճ Ի Ճ Pb82
1 + 32 + 19 + 11 + 19 = 82

Ինչպես երևում է, այս թվերը ևս համընկնում են այդ տարրի կարգաթվի հետ:

Անագ մետաղին Հրաչյա Աճառյանի հայերեն Արմատական բառարանում (Երևան, 1986թ.) տրված է նաև հայերեն **կլայեկ** բառը, որը մինչ այժմ Հայաստանի տարբեր շրջաններում օգտագործվում է որպես անագի անվանում: Կլայեկ բառը չի համապատասխանում նշված հիպոթեզին, և հեղինակը ցույց է տվել, որ կլայեկ բառի արմատը **կալայ** բառն է: Այդ բառն օգտագործվում է վրացական, օսեթական, սերբական, ուզբեկական, տաջիկական և այլ լեզուներում և կալայ բառի օգտագործման տարածքի կենտրոնը Հայաստանն է: Գրենք կալայ բառը:

Կ Ա L Ա Յ Sn50
15 + 1 + 12 + 1 + 21 = 50

Հիմք ընդունելով մետաղի անվանման բառարմատ-կարգաթիվ կապի վարկածը՝ ստորև կներկայացվեն մեր կողմից ստացված որոշ մետաղների հին հայկական բառարմատները:

Այժմ քննարկենք **երկաթ** բառը: Ժողովրդական լեզվով երկաթ բառը բացատրվում է երկնքից կաթող՝ այն կապելով երկաթ պարունակող երկնաքարերի հետ: Ինչպես արծաթ բառում երկաթ բառում ևս **աթ**-ը վերջածանց է, իսկ բառարմատը **երկ**-ն է: Հայոց լեզվում ե-է-ա հնչյունափոխությունը հաշվի առնելով, օրինակ՝ Երևան-Էրիվան, Արմենիա-Էրմենիա, երկիր-էրգիր, կարող ենք գրել երկաթ-արկաթ, որն այժմ էլ օգտագործվում է հայերեն բարբառներում, օրինակ՝ Արցախում:

Հաշվի առնելով գ-կ-ք-ի հնչյունափոխությունը՝ երկաթ-երգաթ, արկաթ-արգաթ ձևերը, կարող ենք գրել՝ արգաթ: Ընդունելով ր-լ նաև լ-ն հնչյունափոխությունները, օրինակ՝ անալի-ալանի, ենթադրում ենք որ երկաթ բառի արմատը անգ-ն է:

ԵՐԿ- ԷՐԿ- ԱՐԿ, ԱՐԳ – ԱԼԳ – ԱՆԳ
Ա Ն Գ Fe26
1 + 22 + 3 = 26



Հովհաննես Բարսեղյանի Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանից (Երևան 1973) դուրս ենք գրել **անգ** արմատով որոշ բառեր, որոնք կարծես թե ցույց են տալիս, թվարկում են երկաթի ֆիզիկական, մեխանիկական և քիմիական հատկությունները:

Խ Ա Ն Գ Ա Ր – դիմադրել
Մ Ա Ն Գ Ա Ղ - կտրել
Ա Ն Գ Ա – չծռվող, չխոնարհվող
Ա Ն Գ Ղ – ճանկող գիշատիչ թռչուն
Չ Ա Ն Գ – ճանկ, ձգել, բռնել
Դ Ա Ն Գ – ծանրության չափ
Թ Ա Ն Գ – հազվագյուտ
Ռ Ա Ն Գ – գույն
Կ Ա Ն Գ – դադար, զսպել
Ջ Ա Ն Գ – կաղապար, ձայն
Ժ Ա Ն Գ – օքսիդացած
Հ Ա Ն Գ – կարգ
Ց Ա Ն Գ – զսպախցակ
Գ Ա Ն Գ – պատյան, պինդ

Ի դեպ, շատ լեզուներում **երկաթ** և **գլուխ** բառերի արմատները նույնն են, օրինակ՝ բասկերեն լեզվում երկաթ՝ նշանակում է բուրնի, իսկ գլուխ՝ բուրու (Վահան Սարգսյան, Բասկերենի համառոտ քերականություն, Երևան, 2000, էջ 256):

Վերջում նշենք, որ **անգ** արմատով ունենք Տորք Անգեղ հերոսի անուն: Հիշենք մեծ բանաստեղծի խոսքը՝

Տորքը չէր նման հասարակ մարդու,
Այլ մի աժդահա և շատ ահարկու…

Անգեղ բառը ստուգաբանվում է երկու ձևով. առաջին՝ որպես ան-առանց, գեղ-գյուղ, այսինքն՝ անգյուղ, հայրենիք չունեցող, ինչպես նաև՝ ան-առանց, գեղ-գեղեցիկ այսինքն՝ ոչ գեղեցիկ, տգեղ: Ինչպե՞ս կարելի է ընդունել, որ վերը նշված որակներով անձնավորությունը՝ հսկա, մեծ ուժի տեր, Հայաստանում ապրող հայ հերոսը լինի անհայրենիք, տգեղ: Եթե ընդունենք **անգ** արմատը և -**եղ** վերջավորությունը, որը ցույց է տալիս հատկանիշ: Օրինակ՝ համ-համեղ, գույն-գունեղ, ցանց -ցանցեղ, ապա **անգեղ** բառը կնշանակի՝ երկաթյա, ուժեղ: Ինչպես ասում ենք՝ Աշոտ Երկաթ, ևս՝ Տորք Անգեղ-Տորք Երկաթ:

Պետք է նշել,որ **անգեղոս-անգել-հրեշտակ** բառերի արմատը և իմաստը ևս կապված է երկաթ բառի հետ:

Հաջորդը **սնդիկ** բառն է: Սնդիկի անվանումը տարբեր լեզուներում կապված է հեղուկի, շարժման, թրթռոցի, հոսման հետ: Այսպես. Հրաչյա Աճառյանի Հայերենի արմատական բառարանում **սնդիկ** բառի համարժեք է բերվում **կենդանի** բառը: Գրենք կենդանի բառը: Հաշվի առնելով **կ-գ-ս** տառադարձությունը և **ե** ձայնավորի սղումը, ինչպես նաև **անի-ենի-իկ** անցումը, օրինակ՝ նազանի-նազենի-նազիկ, մենք ենթադրում ենք, որ **կենդանի** բառից առաջացել է **սնդիկ** բառը:

Ս Ն Դ Ի Կ
Կ Ե Ն Դ Ա Ն Ի Hg80
15+ 5 + 22 + 4 + 1 +22+11 = 80

Անդրադառնանք **պղինձ** բառին: Հրաչյա Աճառյանը և Հովհաննես Բարսեղյանը **պղինձ** բառի համարժեք նշում են **բրինձ** բառը: **Պղինձ**-ը առաջացել է **պ-բ** և **ր-ղ** հնչյունափոխության հետևանքով՝ բրինձ բառից: Իսկ **բրինձ** բառն առաջացել է **բրոնզ** բառից: Պետք է նշել, որ պղնձի հանքերում միշտ պարունակվում է անագ և սկզբում բրոնզ է անվանվել այն պղինձը, որը պարունակել է նույնիսկ շատ չնչին քանակությամբ անագ: Նշվածից հետևում է որ **բրոնզ-բրինձ-պղինձ** անվանումը չի բնութագրել մաքուր պղինձ մետաղը, այլ ստացված պղինձ նյութը:

Հրաչյա Աճառյանի բառարանում **պղինձ** բառի համարժեք բերվում է նաև **խալկ-խալգ** բառը, որը հունարեն լեզվում ևս նշանակում է պղինձ:

Օրինակ՝ խալկոգեն են կոչվում 7-րդ խմբի էլեմենտները, որը նշանակում է պղնձի հետ աղ առաջացնող: Գրենք **խալգ** բառը.

Խ Ա L Գ Cu29
13 + 1 + 12 + 3 = 29

Վերջում խոսենք ևս մեկ մետաղի՝ մոլիբդենի մասին: Մոլիբդենի համար հայերենում օգտագործվում է **կապարարծաթ** անվանումը: Հայաստանում մոլիբդեն արդյունահանվում է Սյունիքի մազում՝ Կապան կենտրոնով: **Կապան** բառը նշանակում է կիրճ, լեռնային անցք, բարբառային՝ երիզ, ժապավեն, նաև՝ ճանապարհներ կապող տեղ:

Կապան բառի -**ան** վերջավորությունը նշանակում է տեղ, օրինակ՝ իջևան-իջևանի տեղ: Այսինքն՝ կապան կարող ենք ասել կապի տեղ, վայր, որտեղ գտնվում է **կապ**-ը, եթե այդ տեղը կապենք մետաղի հետ և գրենք **կապ** բառը.

Կ Ա Պ Mo42
15 +1 + 26=42

Այսինքն՝ կարող ենք ասել, որ կապան նշանակում է մոլիբդենի տեղ՝ վայր, որտեղ կա մոլիբդեն:

Ստացված արդյունքն ուղղակի ցնցող է: Հայերենում մետաղների անվանումները ցույց են տալիս նրանց կարգաթիվը: Այդ զարմանալի փաստը բազմաթիվ հարցեր է առաջացնում. մենք ինչի՞ հետ գործ ունենք, ո՞վ է ստեղծել այդ բառերը, ո՞վ է մտածել մետաղների անվանումները, որոնք իրենց մեջ թաքցնում են դրանց հիմնական բնութագիրը: Եվ ընդհանրապես, արդյո՞ք դա մարդկային ձեռքի գործ է: Եթե՝ այո, ապա ստացվում է, որ մեր նախնիների գիտելիքների մակարդակը եղել է անհավանական բարձր: Չէ՞ որ միայն 20-րդ դարի սկզբին հայտնաբերվեց ատոմի բարդ կառուցվածքը, և որոշվեց ատոմի միջուկի լիցքը: Եթե ընդունենք, որ այդ բառերը մեզ տրված են վերևից, ապա կարելի է միայն հիանալ լուծման հանճարեղությամբ: Չէ՞ որ լեզուն գիտելիքների, ինֆորմացիայի պահպանման ամենահուսալի եղանակն է: Հայոց այբուբենը ստեղծվել է, ավելի ճիշտ, վերահաստատվել է 405-406թթ. Մեսրոպ Մաշտոցի կողմից: Բայց հայոց այբուբենի ստեղծումը հայոց լեզվի ստեղծումը չէ:

Շատ հետազոտողների կողմից ցույց է տրված, որ հայկական այբուբենը տրամաբանորեն կուռ և իմաստալից մի ամբողջական համակարգ է: Վերադառնալով Մեսրոպ Մաշտոցին՝ նշենք, թե ինչու էր պետք Մեսրոպ Մաշտոցին տարիներով նստել հին աշխարհի գրադարաններում, խորհրդակցել Հռոփանոսի հետ, ինչ էր նա փնտրում, ինչ էր նա խնդրում իր աղոթքներում և ինչ ստացավ արդյունքում: Չէ՞ որ ըստ Խորենացու՝ հայկական գրերը Մաշտոցին նվիրել են Բարձրագույնի հաճությամբ:

-Եվ տեսավ նա ոչ գիշերային երազ, ոչ էլ արթմնի տեսիլք, այլ իր տրոփող սրտում հոգու աչքերը բացող քարի վրա գրող ձեռք: Քարը ձյան նման իր մեջ պահպանում էր գծերի հետքերը:

Դ.Մ.Մենդելեևը նույնպես քիմիական տարրերի պարբերական համակարգը տեսել է երազում:

Հեղինակներ՝ Ռ.Խ. ԱԴԱՄՅԱՆ,
Գ.Ս. ՍԻՄՈՆՅԱՆ, Ա.Գ. ՍԻՄՈՆՅԱՆ
«Բնագետ»

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ՈԳԻՆ՝ ՈՉ ՄԻԱՅՆ ՄԱՐՏՈՒՄ



Մարտական ոգին ռազմական հոգեբանության, դաստիարակչական աշխատանքի տեսության եւ պրակտիկայի հիմնական կատեգորիաներից է, որը նշանակում է զինծառայողի, ջոկատի, զորամասի, միավորման եւ զինված ուժերի գաղափարապես եւ բարոյապես պատրաստվածություն՝ մշտապես հաղթելու եւ բարոյական հիմքերն ու սկզբունքներն իրականացնելու: Մարտական ոգին պետք է զարգացնել, աճեցնել, ինչպես ծառը՝ սնուցելով եւ ամրացնելով նրան: Այն անհրաժեշտ է զարգացնել նաեւ կյանքի ցանկացած ոլորտում առօրյա խնդիրները լուծել կարողանալու համար:

Սպորտում առանց մարտական ոգու չկա հաղթանակ: Մարտական ոգին կարող է իր ուժերին չվստահող սկսնակ մարզիկին դարձնել վստահ եւ հզոր:

Մարտական ոգին սպորտում իրականացնելու համար պետք են մրցամարտեր, զույգերով աշխատանք ուժեղագույնների հետ, նրանց փորձի եւ մարտական մտածելակերպի ուսումնասիրում, եւ անշուշտ, հոգեբանական անհրաժեշտ նախապատրաստություն: Մարտարվեստներում նույնպես առողջ մարտական ոգին նպաստում է մարտարվեստի իրական նպատակին՝ ինքնակատարելագործման հասնելուն:

Մարտական ոգուն առնչվող կարեւոր եւ հետաքրքիր հարցերի շուրջ զրուցեցինք Արցախի «Օյամա» կիոկուշին կարատեդոյի ֆեդերացիայի մարզիչ, սեւ գոտի երկրորդ դան, ՊԲ զինծառայող Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ:

- Ինչպե՞ս սկսվեց Ձեր ճանապարհը դեպի մարտարվեստների աշխարհ:

- Իմ ճանապարհն սկսվեց շնորհիվ իմ ավագ եղբոր՝ Ավետիք Այվազյանի, որը խորհրդային տարիներին հայտնի կարատեիստ էր: 1992թ. նա էլ շատ հայորդիների նման զոհվեց Արցախյան գոյապայքարում: Այդ ժամանակ ինը տարեկան էի: Հաճախ էի շոշափում նրանից հիշատակ մնացած կարատեի պարապմունքի շորերը ու ցանկանում նրա սկսածը շարունակել: Սկզբում բռնցքամարտի էի գնում, այնուհետեւ, 90-ականների վերջին սկսեցի ֆուդոկան կարատեով զբաղվել մարզիչ Վրեժ Ավանեսովի մոտ: 2000թ. ընդունվեցի Հայաստանի ռազմական ինստիտուտ: Նկատելով ինձ մոտ համապատասխան ընդունակություններ՝ առաջարկեցին հետախուզության ֆակուլտետում սովորել: Սովորելուն զուգընթաց ծանոթացա կիոկուշին կարատե մարտարվեստին եւ պարապմունքների գնացի սենսեյ Մուրադ Քսպոյանի մոտ: Ստացած գիտելիքներս եւ ունեցած կարողություններս սկսեցի օգտագործել՝ աշխատելով Արցախում որպես մարզիչ, երբ ընդունեցի համատեղել զինծառայությունս եւ երկրում կիոկուշին կարատեն զարգացնելու առաջարկը ԼՂՀ սպորտի կոմիտեի նախագահ Լեռնիկ Ղալայանի կողմից:

- Իսկ կայի՞ն, արդյոք, Արցախում պարապել ցանկացողներ հենց կիոկուշին ոճով:

- Այդ ժամանակ ընդամենը հինգ մարզիկից բաղկացած խումբ ունեի: Քանի որ կիոկուշին կարատեն նորույթ էր Արցախում, մարդիկ անգամ լսած չկային դրա մասին, որոշեցինք ցուցադրական ելույթներ կազմակերպել՝ այդպիսով հնարավորինս ցույց տալով ոճի առանձնահատկություններն ու աստիճանաբար ներգրավելով պարապել ցանկացողների: Եվ քանի որ կիոկուշինի սկզբունքներն անհարիր չեն արցախցու ոգուն, շուտով հինգը վերաճեց հիսունի եւ այսպես շարունակ: Առաջին անգամ 2008թ. անցկացվեց Ղարաբաղի առաջնություն, հետո ՀՀ-ում էլ սկսեցինք մասնակցել առաջնությունների եւ ձեռքբերումներ ունեցանք:

- Այսօր արդեն Ձեր սաները մասնակցում են մրցաշարերի արտերկրում: Հպարտությամբ նշում ենք, որ անցած տարվա դեկտեմբերին աշխարհի կրկնակի չեմպիոն դարձած Արթուր Առուշանյանը եւ ուրիշ տաղանդավոր մարզիկներ համալրում են ձեր ֆեդերացիայի մարզչական կազմը, որի ներքո մոտ 200 մարզիկ է կոփվում. հավանաբար, հեշտ չէր այդ ամենն ստեղծել եւ զարգացնել:

- Հեշտ չէր այն առումով, որ սկզբնական շրջանում միակ մարզիչն էի այդ ոճում, բնականաբար, աշխատանքը դանդաղ էր ընթանում, մինչդեռ այդ խնդիրն անցյալում է մնացել: Մեր ձեռքբերումները հաջողված են ավագ աշակերտների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ, ինչի արդյունքը ակնառու է. ֆեդերացիան համալրված է համապատասխան մարզչական անձնակազմով, գործում են կիոկուշինի խմբեր Արցախի Հանրապետության շրջաններում՝ Ասկերանում, Նորագյուղում, Թաղավարդում, իսկ Ստեփանակերտում ունենք չորս խումբ:

- Սենսեյ Արմեն, ի՞նչ է Ձեզ համար սենսեյի կոչումը:

- Սենսեյ՝ ճապոներեն նշանակում է ուսուցիչ: Ինձ համար մարզիչ լինել՝ չի նշանակում խումբ ունենալ միայն: Սենսեյի կոչումը թերեւս ոչ միայն կոնկրետ մարզական գիտելիքների փոխանցումն է, այլև տարիների փորձը եւ իր առարկայի հանդեպ սեր առաջացնելու կարողությունը:

- Ի՞նչ է մարտական ոգին, ինչպե՞ս է այն ձեւավորվում:

- Մարտական ոգին մարդու մտավոր եւ ֆիզիկական կարողությունների ներդաշնակ դրսեւորումն է մարտական խնդիր կատարելիս: Մարտական խնդիր ասելով հաշվի ենք առնում ոչ միայն մարտադաշտում, ռազմական գործողությունների ժամանակ, մրցագորգում լուծման ենթակա խնդիրները, այլ նաեւ առօրյա կյանքում ամենատարբեր իրադրություններում ծագող խնդիրները, հույզերի եւ վախի կառավարումը: Մարտական ոգին ձեւավորվում է դաստիարակությամբ, որի ընթացքում մեծ դեր ունեն մարդու խառնվածքը, շրջապատող միջավայրի ազդեցությունը:

- Ինչո՞ւ է անհրաժեշտ մարտական ոգին զարգացնել եւ ինչպե՞ս կարելի է այն զարգացնել:

- Մարտական ոգին անհրաժեշտ է զարգացնել նախեւառաջ այն պատճառով, որ ունենալով միայն լավ արտաքին տվյալներ, ֆիզիկական ուժ՝ մարզիկը կամ մարտիկը չի կարող դրսեւորել իրեն: Մարտական ոգին այն առաջնդիչ գործոնն է, որն անհրաժեշտ է ֆիզիկական տվյալները ճիշտ օգտագործելու համար: Գոյություն ունեն մարտական ոգին զարգացնելու մեթոդներ, որոնք օգտագործվում են մարզչի, հրահանգչի կողմից պարապմունքների ժամանակ: Օրինակ՝ մարզումների ժամանակ մարզչի կողմից կիրառվող ծեծ-վարժանքի շնորհիվ մարզիկը սովորում է չվախենալ հարվածներից, անտեսել ցավը, բարձրանում է մարտական ոգին, եւ անհրաժեշտության դեպքում առանց վախենալու կարողանում է ռիսկային գործողությունների դիմել: Կարեւորություն է տրվում նաեւ հոգեբանական զրույցներին, դաստիարակչական կինոֆիլմերի դիտմանն ու համատեղ վերլուծությանը:

- Լինում են դեպքեր, որ մարտական ոգին բարձրացնելով, մարզիկի մոտ նաեւ ագրեսիվության աստիճանն է բարձրանում: Նման դեպքերում ինչպե՞ս վարվել:

- Պետք է ձգտել մարզիկների մոտ ներդաշնակություն եւ տակտի զգացողություն ձեւավորել: Մարզչի դերը ամենակարեւորն է մարզիկների ձեւավորման եւ կայացման հարցում: Նշեմ, որ մեր խմբերում տարբեր խառնվածքի եւ տարիքային առանձնահատկությունների տեր մարզիկներ ենք կոփում, բայց չենք նպատակադրվում նրանց մեջ ճնշել այս կամ այն հատկությունը: Ագրեսիան ճնշել հնարավոր չէ հատկապես այն երեխաների կամ պատանիների մոտ, որոնք կառավարումից դուրս են եկել: Սակայն ագրեսիան կարելի է ուղղորդել նպատակայնորեն. օրինակ՝ դեպի թշնամին ուղղված ագրեսիան առողջ ագրեսիա է: Սովորեցնելով կառավարել իր հույզերը շրջապատի հանդեպ, դրսեւորել ագրեսիան այնտեղ, որտեղ պետք է, մարզիկը կարող է դառնալ հերոս, ոչ թե հանցագործ: Սա մարզիկի եւ մարզչի համատեղ ուղին է, որն անցնում են հարգանքով: Մարզիկը մշտապես պետք է իր մարզչի կարիքն ունենա:

- Ուրեմն, տարբեր բնավորության, տարիքի, խառնվածքի երեխաներից լավ մարզիկներ, մարտիկներ, ազգի պաշտպաններ ձեւավորելու գործում վճռորոշ նշանակություն ունի մարզչի կոմպետենտությունը, նրա հոգեբանամանկավարժական գիտելիքների առկայությունը՝ զուգահեռ տվյալ մարզաձեւին տիրապետելուն: Իսկ որպես մարզիչ աշխատանքի ընդունվելու համար կարեւորությո՞ւն է տրվում մարզչի այդ հատկություններին:

- Արցախում մարզիչներ պատրաստելու դպրոցը դեռեւս կայացման փուլում է: Մարզչական կոմպետենտության խնդիրը թերեւս զիջում է մարզիչների պակասը լրացնելու խնդրին:

- Մարտական ոգին լուրջ մենամարտերում հաղթելու համար հիմնակա՞ն պայման է:

- Հիմնական, բայց ոչ բավարար: Եթե խոսենք լուրջ մենամարտերի մասին, պետք է կարեւորենք մարզիկի ֆիզիկական եւ տեխնիկական կարողությունները, նրան հայտնի հնարները եւ տարրերը բարձր մակարդակով իմպրովիզ անելու կարողությունը եւ դրանք կիրառելու պատրաստությունը ամենաանսպասելի իրադրություններում՝ այն էլ լրիվ վստահորեն եւ համարձակորեն, մենամարտի տակտը եւ մարտավարությունը, բազմակողմանի զարգացածությունը:

- Մարտարվեստներում մեծ նշանակություն ունի հոգու եւ մարմնի ներդաշնակությունը, այսինքն՝ ֆիզիկական եւ հոգեբանական կարողությունները պետք է համահունչ լինեն, այնուամենայնիվ, ըստ Ձեզ, ո՞ր տվյալներն են առաջնային:

- Միանշանակ առաջնայինը հոգեբանականն է, որի օգնությամբ մարդ կարող է իր ֆիզիկականը հասցնել անհրաժեշտ վիճակի, մինչդեռ ֆիզիկական լավ տվյալներն ի զորու չեն հոգեկանը հասցնել պահանջվող մակարդակի:

Ցանկալի է, որ բոլոր երեխաները սպորտով զբաղվեն: Պարտադիր չէ բոլորը հաղթողներ դառնան: Մարտարվեստում տարիքային սահմանափակումներ չկան, իսկ դրա սկզբունքներն ու ավանդույթները, որոնք, ի դեպ, մենք ձգտում ենք պահպանել, չեն պարտադրում մարզիկին հասնել պատվանդանի: Պարապել կարող են բոլորը, զարգացնել ֆիզիկական եւ մտավոր կարողությունները, բարձրացնել մարտական ոգին եւ մարդկային որակը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Շնորհավորանք

ԻՄԱՍՏԱԼԻՃ ԿՅԱՆՔ

Հաթերքի մասին լսել էր մեծերից, կարդացել թերթերի էջերում, անգամ չէր պատկերացնում նրա տեղը և աշխարհագրական դիրքը, սակայն ողջ գիտակցական կյանքը, երջանիկ ամուսնական տարիները, աշխատանքային գործունեությունը պետք է անցկացներ այդ լեռնային գողտրիկ գյուղում և հպարտությամբ այն անվաներ իր հայրենիքը, իր զավակների բնօրրանը:

Ֆաթմա Եսայան: Շատերին ոչինչ չասող անուն, սակայն ճանաչողների համար գեղեցիկ անձնավորություն, հրաշալի մանկավարժ, մայրական վեհություն, սրտացավ ընկեր ու բարեկամ:

Արդեն 50 տարի նա մաթեմատիկա է դասավանդում Հաթերքի Բ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում, և այդ տարիների ընթացքում ձևավորվել է այն մեծ սերն ու հարգանքը, որ նվաճել է իր սաների, գյուղի հասարակության մեջ անխոնջ աշխատանքով, արարման ու ստեղծագործ գործունեության, նվիրումի ու շրջապատի նկատմամբ մայրական վերաբերմունքի շնորհիվ:

Մանկավարժ ու հոգեբան է՝ ասվածի լիարժեք խորությամբ, որը ամեն ժամ, ամեն պահ մտահոգ է աշակերտների իմացական աշխարհով, նրանց անձնական կյանքով, նախասիրություններով ու ներաշխարհի ձևավորմամբ:

Նրա սաներից շատերը հայտնի մանկավարժներ են, բժիշկներ, ինժեներներ ու հասարակական գործիչներ, որոնք երբեք չեն մոռանում իրենց մաթեմատիկայի ուսուցչուհուն, որն իրենց առջև բացել է թվերի զարմանահրաշ աշխարհը և անշահախնդիր մատուցել գիտելիքները:

Ծնվել է 1948թ. Ասկերանի շրջանի Ղշլաղ, այժմ՝ Ծաղկաշատ գյուղում: Բաքվի հնստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հաթերքի միջնակարգ դպրոցում:

Եվ այսօր, երբ բոլորել է կյանքի 70 տարին, հետադարձ հայացքով քննելով նրա անցած ուղին, մեր առջև հառնում է ոչ միայն բազմափորձ մանկավարժը, այլ նաև հրաշալի մայրը, որը ծնել, դաստիարակել և բարձրագույն կրթություն է տվել հինգ զավակների, որոնք այսօր բժիշկներ են, մանկավարժ և տնտեսագետ: Ցանկացած մտավորականի ընտանիք իր ավանդույթներն է ձևավորում տարիների ընթացքում: Ֆաթմա Եսայանի ընտանիքում ևս ձևավորվել են այդ ավանդույթները՝ սովորել, նպատակասլաց կրթություն ստանալ, անպայման կրթություն տալ նաև իրենց երեխաներին: Եվ պատահական չէ, որ այսօր նրա թոռներն էլ շարունակում են իրենց ծնողների ճանապարհը՝ անխոնջ կերպով սովորել կրթական տարբեր կենտրոններում:

Հիանալի գերդաստան, հիանալի պահանջներ ու սկզբունքներ, հիանալի հավատարմություն՝ ստեղծված ավանդույթներով: Գեղեցիկ, անբասիր ճանապարհ, որ քչերին է տրված անցնել կատարելագործվելով, կայանալով հոգու, սրտի ու խղճի հետ հաշտ ու ներդաշնակ: Ֆաթմա Եսայանն այն մարդկանցից է, ով Օստրովսկու խոսքով՝ հետ նայելիս չի ափսոսա ապրած տարիների համար, քանզի այդ տարիները միայն հարստացրել են նրա գիտելիքները, փորձն ու մեթոդական կարողությունները, բարձրացրել վարկանիշը գործընկերների, աշակերտների ու հասարակության մեջ:

Հաթերքի Բ.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժներն ու աշակերտները շնորհավորում են սիրելի ուսուցչուհի Ֆաթմա Եսայանի 70-ամյակը և նրան առողջություն, ստեղծագործ աշխատանք, երկար կյանք մաղթում:

Ինչքան որ հուր կա մեր սրտում բոլորը քեզ,

Հաջողություն, ուրախություն, փորձ, գիտելիք՝ բոլորը քեզ,

Բոլորը տանք ու նվիրենք, մեզ ոչ մի հուր թող չմնա,

Սաներիդ մեջ, ամենքիս մեջ միշտ դու մնաս՝ բոլորը քեզ:

Հաթերքի Բ.Գրիգորյանի անվան
միջնակարգ դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ՈԳԵՂԵՆ

Զոյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ես էլ զինվոր եմ՝ գրիչն է զենքս»-շարքից

* * *

Այն վայրկյանները, որ բերում են ինձ
Հուշի արքնացում,
Հոգիս վնգստում է սոսվահար շան պես...
Բացում փեղկերս և դուրս եմ մղում
Մարմինս հոգնած,
Եվ հառաչանքիս արձագանքը ծեր՝
Փոխվում է լացի...
Մենության պատից
Մղում եմ ինձ ետ և գնում այցի՝
Անտառը վայրի...
Փարվում ծառերին կարոտով մի խոր,
Հետո թիկունքով հենվում եմ նրանց
Եվ նայում վերև՝ աղոթքով լռին...
Աղոթք առ Աստված...
Ես՝ մենավոր ծառ,
Ոչինչ՝ թե ծնկեմ,
Անտառը փրկիր հողմ ու փոթորկից...

* * *

Գիշեր է, անդորր,
Գիշերահավը իր ծղրտոցով
Իմ երազների երամն է փախցնում,
Մտքով թերթում եմ հուշամատյանս,
Ուրիշ, մի ուրիշ աշխարհ է բացվում...
Խոնավ վարսերն եմ սանրում մթության,
Եվ իմ մատների շոյանքից շիկնած՝
Լուսինն է սահում անտառի խորքից,
Եվ ներշնչանքիս պատյանը պատռվում,
Ծնվում է մի երգ՝
Գիշերահարսի նազանքով լռին...
Ես հոգեվարքիս սահմանը անցնում,
Շնչում լիաթոք, մեղմ շշնջում եմ՝
Բարի լույս, աշխարհ....

* * *

Հին շրջմոլիկ է դավը մարդու մեջ՝
Առ ու ծախի փակ շուկայում անգետ,
Ամեն մի գնով առնում-ծախում են՝
Խիղճը, որ սուրբ է և վերից տրված...
Աստծո կամքին հակառակ, անտես,
Փոխանակում են նույնիսկ նյութի հետ:
Ո՞վ է կյանքի հենց վերջին վայրկյանին
Տալու պատասխան Տիրոջ հարցմունքին...
Ո՞վ է թերացել խրատ տալ որդուն
Կամ էլ դստերը տալ խելոք խորհուրդ,
Որ տան մեջ վառվի մոմը հավատքի,
Եվ լուսավորվի հատակը խղճի....

* * *

Սրբում եմ օրվա աչքերը դեռ թաց,
Եվ արցունքի տեղ, մատներս հանկարծ
Արյամբ են թրջվում...
Սրբում եմ հանկարծ այտերը օրվա,
Եվ նա ձեռքերս է շոյում քնքշորեն...
Ուզում է ժպտալ, ծամածռվում է ժպիտը նրա...
Եվ ես համբույրն եմ դառնում օրերի՝
Հպելով շուրթերս նրա այտերին,
Աչքերին նրա, դեմքին տառապող...
Գրկում եմ նրան, և նա իմ գրկում
Ուշաթափվում է անզորությունից...

ՊԱՏԵՐԱԶՄ

Քո անունն անգամ չեմ ուզում լսել,
Չեմ ուզում անգամ հուշեր քրքրել,
Սակայն այն դաջվածք է թողել իմ հոգում՝
Սրտիս զարկի հետ՝ ճոճվող ճոճանակ...
Գնում է, գալիս՝ անվերջ, անդադար:
Բառ չէ այն բնավ, գնդակ անվրեպ՝
Ակամ է պայթող, հրեշ մարդակուլ,
Մայրերի հոգուց ելած հառաչանք,
Գնդակված հավատ՝ չգա՛ս դու էլ ետ:
Քո անունն անգամ չեմ ուզում լսել...

* * *

Եթե ես հասկանալի լինեի՝
Կհասկանային ինձ...
Քարերի ստվերներն են գրկել ամպերը
Եվ տանում են վեր՝ գմբեթներ կերտելով:
Ծածկում են, ծածկում են ծածուկ շղարշով
Մշուշոտ ամպերը մթամած,
Ուզում են վարագուրել անտես
Աչքերից ու հայացքներից մարդկանց
Անցյալը մեր հին՝
Անցյալը, որ ունի պատմություն...
Սակայն արևը ասեղներով ոսկե
Թմրած բիբերն է լուռ ասեղնատում,
Ուզում է մեզ էլ ասես թե հանել
Մշուշոտ ու թաց մութ անձավներից:
Եթե ես հասկանալի չեմ,
Դա նրանից է, որ ինձ չգիտեք,
Եթե ես տխուր եմ,
Դա նրանից է, որ ցավի ընկեր եմ,
Եթե ծովն ալեկոծ իր ափերն է ծեծում,
Ձկնորսի կինն էլ ծնկներն է ծեծում...
Թե առուն գարնանը երգ է հորինում,
Այն սիրո երգն է նոր զույգին երգում,
Հովը հաճախ է մտքերս խառնում,
Հույսի նամակ է բուրմունքը ծաղկի:
Եթե ես հասկանալի չեմ,
Ուրեմն ես հեռու եմ՝
Դեր-Զորի այրող անապատներում,
Մուսա լեռան մութ լեռնախորշերում,
Սարդարապատում,
Ավարայրի քաջ Վարդանանց կռվում.
Մորթված ընկած եմ մեր Մարաղայում...
Արցախյան հողի հերոսամարտում՝
Մոնթեն է կանչել, Բեկորը արի,
Էդմոնի վերքից արյունն է հոսում,
Մարատի կյանքոտ- կյանքը ընդհատվեց,
Ցնորված մայրն է տիրոջը կանչում:
Եթե ես հեռու եմ, իմացեք, մարդի՛կ,
Անցյալն ու ներկան խառնել եմ իրար:
Եվ ագռավն ահա կռինչն ընդհատել՝
Կտցում է ցավիս ուղեղը թմրած...
Ես ետ եմ դառնում կրկին քո կանչից,
Հայրենի՛ք իմ սուրբ,
Եվ զարմանում եմ, թե միտքը մարդու
Ինչ տարածքներ է զբաղեցնում,
Որ սահման չունի,
Թեև ծուռումուռ գծած սահմաններ
Ունենք կտրտված ու բաժան-բաժան,
Եվ այդ տարածքի վրա գծել են երկիր՝
Հայաստան աշխարհ:
Եվ սրտիս նման փոքրիկ մի մասին
Արցախ են գրել, որ չեն ցանկանում
Երկիր ճանաչել...
Սակայն նա ամեն մի հայի սրտում
Եռագույն կամքով՝ Արցախ է գրված:
Եթե ես ինքս ինձ հասկանայի,
Գրիչս առած, այսքան տարիներ
Չէի հորինի այսքան երգ ու տաղ:.
Ես ետ եմ դառնում կրկին քո կանչից՝
Հայրենի՛ք իմ մայր,
Դու իմ նո՛ր Արցախ,
Իմ ներկան ես դու՝ գալիքը պայծառ:
Անցյալը հիշելով դասեր եմ առնում,
Որ այնպես քայլեմ ճշմարիտ ճամփով,
Որ քո որդիները կարոտիս կանչով
Նորից տուն դառնան,
Նորից ու կրկին դառնան գիրկը քո՝
Ապրեն քո հողում՝ կանչիդ զորավիգ,
Զինված և զգոն և հավետ զինվոր,
Աստված պահապան՝
Հայոց բանակին և իմ հայ ազգին:
Ես էլ զինվոր եմ՝ գրիչն է զենքս
Եվ ոգին Հայ մոր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի հունվարի 23-ից սկսում է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք» (շարադրություն) առարկաներից միասնական և կենտրոնացված (2018թ. բուհերի ընդունելության), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաներից պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2017-2018 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97):

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,
- ՀՀ և ԱՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթի պատճենը:

12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը **2018թ. փետրվարի 23-ն է:**

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047)97- 40 -51 հեռախոսահամարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՈՒՂՂՈՒՄ

«Լուսարար»-ի 2017թ. հ.36-ի 5-րդ էջում տպագրված «Որ բարի լինեն բոլորը» թղթակցության 3-րդ սյան «Նույն թվականի նոյեմբեր ամսին, պարոն Գրիգորյանի ուղեկցությամբ,«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Կարեն Հարությունյանի կողմից և «Հյուսիսային էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Գագիկ Սարգսյանի **միջոցներով**...»-ի փոխարեն կարդալ. «Նույն թվականի նոյեմբեր ամսին, պարոն Գրիգորյանի ուղեկցությամբ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Կարեն Հարությունյանի կողմից և «Հյուսիսային էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Գագիկ Սարգսյանի **միջոցով**...»

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3100: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.01.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: